



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ



**Ն. Ս. Օ. Տ. Տ.
Գարեգին Բ Ամենայն
Հայոց Կաթողիկոսի
Ուղերձը ՀՀ Բանակի
օրվա առիթով**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում մեր բանակի սպաներին ու զինվորներին և համայն մեր ժողովրդին Բանակի օրվա առիթով:

Դարերի ընթացքին մեր բոլոր պայքարների բուխում հայ զինվորը ցուցաբերել է մեծ արիություն ու անձնվիրում՝ հերոսաբար պաշտպանելով երկիր հայրենին և հարազատ ժողովրդին: Արցախի պաշտպանության համար մղված պատերազմներում Հայոց բանակի քաջարի զորահրամանատարներն ու զինվորները, որոնց թվում ազգային փոքրամասնությունների խրոխտ զավակները, նույն խիզախ ոգով հերոսաբար պայքարեցին հանուն հայրենիքի, և շատերն իրենց կյանքը նվիրեցին՝ ի սեր հայրենյաց և ազգի:

Այս տարի Բանակի տոնը դիմավորում ենք պատերազմի ողբերգական հետևանքների ցավը մեր հոգում: Ստեղծված նոր մարտահրավերներին ընդառաջ, հավատում ենք, աշխարհասփյուռ ազգս հայոց առ Աստված ասպալինությամբ և մեր անցյալի հաղթանակների ոգով պիտի կերտի նոր հաջողություններ ու ձեռքբերումներ, վերականգնի բարձր ու շեն կյանքը Արցախում և Հայաստանում՝ նաև ի պանծացումն հանուն հայրենյաց գոհված մեր զավակների խնկելի հիշատակի:

Աղոթում ենք առ Բարձրյալն Աստված՝ հայցելով, որ Իր խնամքի ներքո պահպանի հայրենիքի պաշտպան Մեր սիրեցյալ զավակներին և շնորհի անվտանգ ծառայություն: Թող Տերն Ամենակալ Իր օրհնությունն ու ողորմությունը տարածի համայն մեր ժողովրդի վրա ի հայրենիս և ի սփյուռս, այսօր և միշտ. ամեն:

**ԵՆՂՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց**

19 հունվարի **ՀՀ-ում Ղազախստանի դեսպանին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Ղազախստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թեմուր Ուրազաեւին:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց դեսպանին՝ պաշտոնավարման ընթացքում երկու երկրների միջեւ հարաբերությունների եւ համագործակցության զարգացման գործում ներդրած ջանքերի համար: Վեհափառ Հայրապետը նաեւ գոհունակությամբ անդրադարձավ Մայր Աթոռի եւ Ղազախստանի Հանրապետության միջեւ ձեւավորված սերտ գործակցությանը, մասնավորապես միջկրոնական երկխոսության կազմակերպման ոլորտում՝ Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարի շրջանակներում:

Դեսպան Թեմուր Ուրազաեւն իր հերթին գնահատանքով խոսեց հայ-ղազախական փոխհարաբերությունների, ինչպես եւ Հայաստանում ծառայության տարիների իր տպավորությունների եւ



Ղազախստանում ապրող հայ համայնքի մասին:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց արցախյան պատերազմին, հետպատերազմյան դժվարություններին եւ առկա խնդիրների հաղթահար-

ման ուղիներին: Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը դիվանագիտական առաքելությունն ավարտող դեսպանին մաղթեց արգասաբեր գործունեություն եւ հաջողություններ հետագա ծառայության մեջ:

21 հունվարի **ՀՀ-ում Բելառուսի նորանշանակ դեսպանին**



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Բելառուսի Հանրապետության նորա-

մշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկին:

Իր բարեմաղթանքները բերելով դես-

պանին նշանակման առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ Մայր Աթոռի եւ Բելառուսի Հանրապետության իշխանությունների, ինչպես եւ դեսպանատան միջեւ ձեւավորվել են ջերմ հարաբերություններ եւ արդյունավետ փոխգործակցություն: Նորին Սրբությունն արձանագրեց, որ երկու ժողովուրդների բարեկամությանն իրենց նպաստն են բերում նաեւ Հայոց եկեղեցին եւ Բելառուսի Ուղղափառ եկեղեցին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Բելառուսի հայ համայնքի եւ նրա հոգեւոր կարիքների հանդեպ դրսևորվող ուշադրությանը, մասնավորապես Միսկյուն հայկական եկեղեցու կառուցման նպատակով հողահատկացման գործընթացին:

Իր հերթին Ալեքսանդր Կոնյուկը հաստատեց, որ երկու երկրների միջեւ առկա են ամուր եւ եղբայրական կապեր, որոնք էլ ավելի պիտի զորանան ու զարգանան:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ երկու երկրների առջեւ ծառացած մարտահրավերներին:

Հայրադեսական ճնշումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ հունվարի 21-ի հայրապետական տնօրինությամբ Պարզեւ արք. Մարտիրոսյանը նշանակվել է հատուկ հանձնարարություններով հայրապետական նվիրակ՝ ազատվելով Արցախի թեմի առաջնորդի պաշտոնից: Արցախի թեմի առաջնորդ է նշանակվել Վրթանես Եպս Աբրահամյանը՝ ազատվելով ՀՀ զինված ուժերի հոգեւոր առաջնորդի պաշտոնից:

ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդի պաշտոնավատար է նշանակվել Եմով թեմ. Եսայանը: Հունվարի 27-ի հայրապետական տնօրինությամբ Մուշեղ Եպս Բաբայանը նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վա-

նական խորհրդի ատենապետ եւ Մայր տաճարի լուսարարապետ՝ ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրենի պարտականություններից:

նական խորհրդի ատենապետ եւ Մայր տաճարի լուսարարապետ՝ ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրենի պարտականություններից:

ԱՅՑ ԵՌԱԲԼՈՒՐ



Հունվարի 28-ին, Բանակի օրվա առիթով, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գաբեգին երկրորդ ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգեւորականների ուղեկցությամբ այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հար-

գանքի տուրք մատուցելու համուն հայրենիքի պաշտպանության նահատակված քաջորդիների հիշատակին եւ աղոթք բարձրացնելու նրանց հոգիների հանգստության համար:

Բանակի օրվա առիթով կատարվեց Հանրառեսական մաղթանք

Հունվարի 29-ին, հանդիսատեսությամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գաբեգին երկրորդ ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում, Հայոց բանակի օրվա կապակցությամբ, կատարվեց Հանրապետական մաղթանք:

սաղմոսներ՝ «Աստծուց են գործվում ու փառքն իմ, Աստված է օգնականս իմ, եւ Աստծու վրա է հույսն իմ» (Սաղմ. ԿԱ 8-9): Քրիստոնյան իր հույսը դնում է ոչ թե սննդի բաների, այլ միայն Աստծու վրա՝ Նրա ողորմությամբ գործելով առանց ծուլանալու եւ առանց աջ ու ձախ շեղվելու:

արարքների ունակ են միայն հարությանը, կյանքը վերստին Տիրոջ ձեռքից հետ ստանալուն հավատացող քաջորդիք»:

Իր խոսքում Վրթանես սրբազան իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության նկատմամբ ցուցա-

րիներին սատար են կանգնել Հոգեւոր առաջնորդությանը:

Իր գնահատանքը բերելով Հայոց բանակին Հայաստանում եւ Արցախում իրենց նվիրյալ ծառայությունը բերած նախկին ու ներկա զոհերեցներին՝ սրբազան հայրը մաղթեց, որ հանձնառության մույն ոգով շարունակեն

Վերջում Վրթանես եպիսկոպոսը, շնորհավորելով ամենքին Հայոց բանակի 29-րդ տարեդարձի առիթով, մաղթեց, որ մշտապես կարող լինեն դիմագրավել թշնամու ոտնձգությունները՝ համարժեք գործերով ու քայլերով, գոտեպնդված մարմնավոր ու հոգեւոր սպառնալիքներով:



Սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանը, ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչներ, Մայր Աթոռի միաբաններ եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության զոհերեցներ:

Նախքան արարողությունը ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության նախկին առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը, որն օրեր առաջ կոչվել է Արցախի թեմի առաջնորդի պաշտոնին, ողջունի խոսք ուղղեց ներկաներին՝ Հայոց բանակի տոմի առիթով: Վրթանես սրբազանը ընդգծեց, որ 2020 թ. մեր երկիրն ու Հայոց եկեղեցին դժվարին փորձությունների միջով անցան՝ ունենալով թե ոգեւորության օրեր եւ թե ցավի ու անհուն տառապանքի դառնագին ընթացք: Սրբազանն ի մասնավորի ասաց. «Յուրաքանչյուր իրավիճակ մարտահրավեր է անդրադառնալու եւ ճշգրտելու մեր կեցվածքը Արարչի առաջ: ...Հուսալքման ու հուսահատության պահերին կարելու է զենքերը վայր չդնել՝ համոզվելու համար, որ Աստված մշտապես մեզ հետ է, մեր կողքին: Հարատև

«Հույսը երբեք չի ամաչեցնում» (Հռոմ. Ե 5) եւ երբեք ձեռնունայն չի թողնում նրան, ով հուսալից սրտով գործում է անընդհատ ի փառս Աստծու եւ ոչ թե իրեն, զինված խոնարհությամբ եւ ոչ թե հպարտությամբ, «գոտեպնդված ճշմարտությամբ» (Եփես. Զ 14) եւ ոչ թե ստի փուչ ասպազենով: Մեր հույսն ու հույսի աղբյուրը հարուցյալ մեր Տերն է, որ անընդհատ իրեն ապավինողի կողքին է՝ Իր օրհնակով գործացնելու, նաեւ քաջալերելու համար ուղիղ մայելու մահվան աչքերին ու չեղանչելու, որովհետեւ Ինքն արդեն հաղթել է աշխարհին (Հովհ. ԺԶ 33) ու մահվանը, որ աշխարհի իշխանը կարող է պատճառել: Այս համոզումն էր նաեւ մեր զինվորների ու սպաների սրտերում, որ անկախ պատերազմի սպասվող ու հաշվարկված ելքից՝ հաղթողի կարգավիճակ ունեն եւ մարտի դաշտում չեն պարտվել, քանի որ արել են հնարավորն ու անհնարը: Պատերազմի օրերի ժամանակագրությունը լի է բազում սխրանքների արձանագրումով, որ բնորոշ են հաղթողին ու հերոսին, անշեղորեն դեպի «մահ իմացեալ» քայլողին: Եվ այսպիսի

բերվող ջերմագին հոգածության համար, ինչպես նաեւ պաշտպանության բոլոր նախարարների

իրականացնել իրենց հոգեխնամ սպասավորությունն այս ծանրագույն պայմաններում, երբ շարու-



ու զենեղալներին՝ մշտական ներդաշնակ աշխատանքի համար՝ ի բարօրություն հայ զինվորի ու սպայի, այն մտահոգ ու շահագրգիռ քաղաքացիական անձանց ու բարերարներին, որ անցած տա-

նակելու են սփոփել զոհվածների հարազատներին, ոգեւորելու են վիրավորներին եւ անդադար աղոթքով հայցելու են Տիրոջից՝ գերեզմանավոր հայրերի շուտափույթ վերադարձը:

Այնուհետեւ հոգեւոր դասը եւ արարողությանը ներկա զինվորականներն ու ժողովուրդը աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ Հայաստանի եւ Արցախի խաղաղության, անասանության ու առաջընթացի եւ Հայոց բանակի հաղթական ընթացքի համար:

Ամենայն Հայոց Հայրապետը նաեւ մասնավոր աղոթք վերառաքեց առ Երկնավորը՝ արցախյան պատերազմում հերոսաբար նահատակված քաջարի զինվորականների հոգիների խաղաղության եւ հանգստության համար:

Հանրապետական մաղթանքից հետո Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում կատարվեց պարգևաբաշխություն: Ի գնահատություն արցախյան պատերազմում ցուցաբերած խիզախության՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության միջնորդությամբ, Հայոց եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվով բարձր շքանշանի արժանացրեց մի շարք զինվորականների:

Շարունակությունը՝ էջ 3

Խոնարհվում եմ մեր ժողովրդի լուսության առջեւ



Լրժանապատիվ լուսթյունն իր խորքերում տարողունակ հզոր ուժ եւ լիցքեր ունի: Այդ լուսթյան խորին խորհուրդը անբեկանելի է ու մեծապես պարտավորեցնող:

Ամանորի նախօրյակին՝ դեկտեմբերի 31-ին, Եռաբլուրի հուշահամալիրում հայ ժողովուրդը լուսթյամբ, խոնարհումն ու խնկարկումն սարսեցնող արարողությամբ, հարգանքի տուրք մատուցեց իր զոհված բյուրավոր որդիների հիշատակին: Այդ երեկո Եռաբլուրը դարձել էր լուսթյան համակ հովիտ, պատմական հիշողության ու հոգեկան լարման դաշտ, իսկ բեմից հնչում էին հայ անվանի արվեստագետների՝ հոգի արյուղ ու հոգի քրքրող երգն ու խոսքը:

Երգն ու լուսթյունը խիստ խորհրդանշական էին. դրանք մերաշն էին միմյանց եւ ժողովրդի հոգեկան ու բարոյական կացությամբ՝ դառնալով մեր համազգային ու համաժողովրդական վիթխարի ցավի ու վշտի թարգմանը այդ երեկո: Չնայած ուշ ժամին ու դաժան սառնամանիքին՝ ժողովրդական լայն զանգվածների հոսքը չէր ընդմիջվում ու չէր ընդհատվում: Մարդկանց ձեռքերում ծաղիկներ ու ծաղկեփնջեր էին, դեմքերին եւ հոգիներում՝ ընդգծված ու շեշտադրված ծանրախորհուրդ թախիծն ու տխրությունը: Այդ պահին բոլորը՝ ծանոթ ու անծանոթ, բարեկամ, ազգակից, հարազատ, Սփյուռքից թե հեռավոր մարզերից եկած, դարձել էին մեկ սիրտ ու մեկ հոգի: Յուրաքանչյուր շիրիմի մոտ կանգ էին առնում այցելուները եւ միմեկին գետնի խոնարհվում նահատակ զինվորի թանկ հիշատակի առջեւ: Եռագույն դրոշմերը նույնպես խոնարհումով մասնակից

էին լուսթյան ու ոգեկոչումն այդ մեծագույն երթին: Թվում էր, թե կանգ է առել ժամանակը, եւ համայն հայությունն է հավաքվել այստեղ՝ հայոց այս նոր ուխտավայրում: Այր, դա ամբողջ հայ աշխարհի հարգանքի ու սիրո, ծնրադիր խոնարհումն ու պաշտամունքի հոգեկան տուրքն էր բյուրավոր նորահաս զավակների մաքրամաքուր հիշատակին: Եռաբլուրը սգաց լուսթյան երթով, լուսթյան րոպեով, որը մեր հոգում դարերի պատգամ ու խորհուրդ ունի: Նահատակ հերոսների անմեռ ոգին էր կանչում բոլորին.

Ինձի, ինձի եկեք այսօր բոլորնիդ. Սիրտս այնքան բոց ունի, հոգիս այնքան լույս...

Լուսթյան համատարած այս ուխտն ու երթը պահպանվեցին Հայաստանի բոլոր մարզերում, բոլոր քաղաքներում եւ գյուղերում: Ամանորի գիշերը որեւէ բնակավայրում որեւէ հրավառություն, զվարճանքի որեւէ աղմուկ չխախտեց այդ լուսթյունը: Բոլորն էլ՝ մեծից մինչեւ փոքր, ուսյալից մինչեւ անուս, ըմբռնում, հասկանում, պատկերացնում էին սույն պահի լուսթյունն ու կարեւորությունը, ապրում եւ այրվում էին պատերազմի զոհ մեր թանկագին երիտասարդության խնկարկելի արարողությամբ:

Եվ հիմա անկեղծ սրտով ուզում եմ բացականչել, որ իմ հոգու եւ ուղեղի բոլոր նյարդերով խորապես խոնարհվում եմ դարերի, հազարամյակների պատմությամբ իմաստնացած մեր ժողովրդի այս խիստ արժանապատիվ լուսթյան առջեւ...

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Հայահունչ ու հայաեունչ Շուշի

Շուշի բերդաքաղաքի՝ մեր պատմության ու մշակույթի նվիրական ուստանի անվան ստուգաբանության թերեւս ամենաարժանահավատ տարբերակը Արցախի բարբառի **շուշ** («ծառի ընծյուղ», «բարձր տեղ», «բարձունք») բառից բխեցնելն է: Այս բառը հայերենի բարբառներում դրսեւորվում է նաեւ **շուշ** («ուղիղ բարձրացած, ուղղաբերձ») եւ **շիշ** («ծառի կատար») ձեւերով: Քանի որ Արցախի բարբառում միավանկ բառերի ու ձայնավորը հնչյունափոխվում եւ դառնում է **օ (ո)** (կուժ-կոժ, սուտ-սոտ, տուն-սոն, փուշ-փոշ եւ այլն), հավանաբար բառի նախնական **շուշ** տարբերակից է բարբառում առաջացել **շուշ** ձեւը: Վերջինից է ակնհայտորեն բխում նաեւ Շուշիից ոչ հեռու գտնվող **Շոշ** գյուղի անունը:

Հազարամյակներ շարունակ անառիկ ամրոց եղած, ապա ավելի ուշ շրջաններում բերդաքաղաք դարձած Շուշիի աշխարհագրական դիրքն էլ է հուշում, որ այդ անունը քաղաքը ստացել է հենց շրջակայքի վրա իշխող դիրքի պատճառով:

Շոշ (շուշ, շիշ) բառը թեւեւ գրաբարում ավանդված չէ, սակայն, ըստ երեւութին, պատկանում է այն բառերի թվին, որոնք հին հայերենում **իւ** երկբարբառ են ունեցել եւ բարբառներին են անցել **ի** կամ **ու** պարզ ձայնավորներով. ինչպես հինհայերենյան **ալիւր** բառի դիմաց բարբառներում առկա են **ալուր** եւ **ալիր** բարբառային ձեւերը, **սիւն** բառի դիմաց՝ **սուն** եւ **սին**, **հարիւր** բառի դիմաց՝ **հարուր** եւ **հարիր** ձեւերը, այնպես էլ **շիւշ** բառի դիմաց առկա են **շուշ** եւ **շիշ** ձեւերը: Ի դեպ, **շուշ, շուշ** տարբերակները «ծառի ընծյուղ», «բարձր տեղ» նշանակություններով առավելապես տարածված են Արցախ-Սյունիքի բարբառի խոսվածքներում, իսկ **շիշ** տարբերակը՝ Հյուսիսային Նախիջեւանի եւ Վայոց ձորի տեղաբնիկ բարբառի (Ճահուկ-Վայքի միջբարբառ) խոսվածքներում՝ «ծառի կատար» նշանակությամբ:

Փաստորեն, անցյալում ամրոցի կրած **Շուշի բերդ** կամ **Շոշի բերդ, Շոշի դալա, Շոշի սղնախ**, ինչպես նաեւ **Քարազխի բերդ** անունները հավասարազոր են, քանզի բոլորն էլ ունեն «բարձունքի ամրոց» իմաստը, եւ դրանցում ակնհայտորեն նկատի է առնված հենց Շուշիի աշխարհագրական դիրքը:

Վերջին մի քանի դարերում բերդաքաղաք դարձած Շուշին շարունակել է կրել բերդի անունը՝ սեռական հոլովով, ի դեպ՝ միջնադարյան ձեռագրերում ավանդված են քաղաքանվան ոչ միայն **ի** հոլովիչով **Շուշի**, այլեւ **ու** հոլովիչով **Շուշու** եւ **ո** հոլովիչով **Շուշոյ** ձեւերը:

Մի քանի խոսք նաեւ «աղբբեջանական» **Շուշա (Տuşa)** ձեւի մասին: Իրականությունն այն է,

որ հայկական տեղանունների սեռական հոլովը եւ գրաբարում, եւ միջին հայերենում, եւ բարբառների մեծ մասում կազմվում է առավելապես **ա** հոլովիչով (Երեւան—**Երեւանա**, Վան—**Վանա**, Ճահուկ—**Ճահկա**, Գարդման—**Գարդմանա** եւ այլն), ուստի, անկասկած, Շուշին ունեցած պետք է լինի նաեւ **Շուշա** սեռականաձեւ տարբերակը, որի վկայությունն է այսօր էլ Արցախի բարբառում կիրառական **Շուշվա** ձեւը: Հետեւաբար, հիասթափեցնենք ամեն հայկականը կլանել ցանկացող աղբբեջանական ելուզակներին (մանավանդ՝ դավադիր հանձնումից հետո առաջին անգամ քաղաքում հայտնված եւ հայերեն Շուշի ձեւը սնապարծ կեցվածքով անբարտապանորեն ծաղրող՝ իրենց առաջնորդին), որ **Տuşa** տարբերակը ամեննեւին էլ կապ չունի աղբբեջաներեն **շուշա** («ապակի») բառի հետ, ինչպես իրենք են կարծում (ըստ աղբ-



բեջանական «ստուգաբանության»՝ քաղաքն իր անունը ստացել է իբր «ապակու նման» մաքուր օդ ունենալու պատճառով. ենթադրենք, որ կարելի է կարծել, թե աշխարհի բոլոր ապակիները մաքուր են, բայց **մաքուր** բառը որեւէ տրամաբանությամբ կարելի է համեմատել... ապակու հետ): Սակայն ստի ոտքերն այս անգամ էլ են կարճ, քանզի նրա հեղինակները «մոռանում են», որ պարսկերենից փոխառյալ **šūšə** բառի երկու ձայնավորներն էլ իրենց լեզվում քմային են, իսկ քաղաքի՝ իրենց անվանման ձայնավորներից... ոչ մեկը քմային չէ:

Ստացվում է, որ թուրքերն էլ նույն անտրամաբանական տրամաբանությամբ կարող են **Վանա բերդ** ձեւը թուրքերեն համարել, իսկ **Վանի բերդ** տարբերակը՝ հայերեն:

Շուշին ոչ միայն մեր նորօրյա ազատամարտի խորհրդանիշն է, այլեւ մեր հնամյա պատմության ու մշակույթի հավերժող առասպելը, իսկ նրա բոլոր անվանումները՝ հայերեն թե օտար, հայահունչ են եւ հայաշունչ:

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Բանակի օրվա առիթով կատարվեց Հանրառեսական մաղթանք

Սկիզբը՝ էջ 2

Նորին Սրբությունը «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշան հանձնեց ՀՀ ՊՆ եւ ԱՀ ՊԲ զինծառայողներ կապիտան Շանթ Հայրապետյանին, լեյտենանտ Գեորգ Կարապետյանին, կրտսեր սերժանտ Հովհաննես Գեորգյանին եւ շարքային Արամ Միրեյանին:

Ընդունելության ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով Արցախի Հանրապետությունում ծավալած պատերազմական գործողություններին ակտիվ մասնակցելու համար մի շարք եկեղեցականներ արժանացան նախարարության պարգևների:

ՀՀ ՁՈՒ զինամշանով ձեռքի զինվորական ժամացույցով պարգևատրվեցին Գեղարդավանքի հոգեւոր սպասավոր Արիս արքեպ Տոնոյանը, գնդերեցներ Գեորգ սրկ. Կադեյանը, Ծերուն սրկ. Ներսիսյանը, Պետրոս սրկ. Ղազարյանը, Նորայր սրկ. Խաչիկյանը, ինչպես նաեւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի երեք սպասավորներ՝ Սեբեոս քին. Ղալաչյանը, Արիստակես քին. Հովհաննիսյանը եւ Աշոտ քին. Ղազարյանը:

«Անդրամիկ Օգանյան» մեդալով պարգևատրվեցին



ավագ գնդերեցներ Ենովք քին. Եսայանը, Գալուստ քին. Սահակյանը եւ Գոռ սրկ. Գյուրջյանը: «Գարեգին Նժդեհ» մեդալ շնորհվեց Ամարասի վանահայր Գեղարդ արք. Հովհաննիսյանին, Գեղարդավանքի հոգեւոր սպասավոր Էդգար սրկ. Օհանյանին, գնդերեցներ Մանուկ քին. Ջեյմալյանին, Վարազդատ քին. Նաջարյանին, Սկրտիչ սրկ. Տեր-Սկրտչյանին, Կարո սրկ. Ղարիբյանին, Արտաշես սրկ. Ներսիսյանին, Վահե սրկ. Սկրտչյանին, Հովհաննես սրկ. Անդրյանին, Ման-

վել սրկ. Սարգսյանին եւ Դավիթ սրկ. Հայրապետյանին:

Պարգևաբաշխությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունն ու պատգամը փոխանցեց ներկաներին:

Փառք եւ զոհություն բարձրացնելով առ Աստված՝ արցախյան պատերազմի օրերին Հայոց բանակի զինվորների դրսեւորած արի ոգու համար, Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշեց, որ հավատում է՝ Աստծու օրհնության ներքո մեր բանակը պիտի շարունակի վերականգնվողվել եւ նույն քաջարի ոգով շարունակել երաշխավորը լինել մեր հայրենի պետականության եւ ժողովրդի անվտանգության: Վեհափառ Հայրապետը հայցեց, որ Տիրոջ Աջը միշտ հո-

վանի եւ մարտակից լինի Հայոց բանակի արիասիրտ մարտիկներին, օգնական եւ պահապան՝ մեր զինվորներին եւ հրամանատարներին: Նորին Սրբությունը մաղթեց, որ երկնավոր Տերն Իր օրհնությունը հավերժ հովանի դարձնի աշխարհասփյուռ հայոց ազգին:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆՑԱՆ (1830–1892)



Սկիզբը՝ 2020-ի թիվ 18–24, 2021-ի թիվ 1

ՊՈԵՄՆԵՐ

Վարտվում է պատմությունը, որով հիշեցվում է Հայաստանին պատահած դժբախտությունների համապատկերը՝ իր պատճառահետևանքային առնչություններով: Իսկ վերջաբանում, որ 17-րդ հատվածն է, ամպերով ծածկված Լուսինը լույս է հեղինակին թողնելով վրդովված հոգով, «ձեռները ծոցին, գլուխը քարշ արած»:

Լուսինի տխրությունը փոխանցվում է հեղինակին: Ամեն իրիկուն մա «մնում է Լուսինի խաղաղ ծագելուն», որ հորդորի նրան՝ հայությանը սերնդեսերունդ անդադար պատմել իր լսած ազգաշափ հուսմանը՝ զրույցը ամենասիրելի հերոսի եւ նրա սխրանքի մասին:

*Պատմե՛ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ինչպես կորավ հայ ազգի գահը,
Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը — աշխարհն Հայաստան
(2, 34):*

Գաղափարականի հետ միասին «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմն ունի գեղարվեստական անուրանալի արժանիքներ, որոնց շնորհիվ ձեռք է բերել մասնապատճառական մշակութային: XIX դարի երկրորդ կեսից սկսած մինչև այսօր տեղող ազատագրական պայքարի ընթացքում եթե ոչ ամբողջ պոեմը, ապա գոնե նրա առանձին մասեր, ինչպես «Վարդանի երգը» եւ «Լռեց: Ամպերը եկան» վերջաբանը, որպես ինքնուրույն գեղարվեստական միավորներ՝ իրենց մեղեդիավորումներով կենցաղավարում են եւ մեր օրերում, իսկ 7-րդ եւ այլ հատվածների անմիջական ազդեցությամբ ստեղծվել են XIX դ. վերջերի եւ XX դարակազմի ազատագրական պայքարի շրջանի մի քանի ռազմերգեր:

Այս պոեմից անմիջապես հետո կան նրան զուգահեռ գրվել է հորդորող՝ «Դեւ Մրուս» ծավալուն չափածո (116 տող) ստեղծագործությունը, որը հեղինակը ազգային ավանդություն է անվանել, իսկ որոշ գրականագետներ էլ՝ պոեմ (*Մ. Սաղյանը, օրինակ, բառացիորեն գրել է. «... մույն այդ 1855 թ. ստեղծած «Դեւ Մրուսը» պոեմում»...*, *Նշվ. գիրք, էջ 126*): Այնպես է, որ «Դեւ Մրուսը» բալլադին բնորոշ լեզունային դիպաշար ունի, գործողության վայրը՝ հին հունական պատկերացումների հիմնավորումներ, Տարտարոս-Գեհենը՝ Ստիքս եւ Աքերոն գետերով, գործող հերոսները՝ Դեւ Մրուսը, Բեհեզգեբուլը, Անամելիքը, այլ դեւերն ու սատանաները, գործողությունները պայմանական-երեւակայական են, որոնք դառնում են երեւոյթների արդիական իրավիճակների առասպելական հիմնավորումներ: Երբ ամբողջ աշխարհը շրջած Բեհեզգեբուլ ծերունին Հայաստանի ու հայերի, վերջիններիս կրոնասիրության, հայրենասիրության, գեղեցկության, նվիրվածության, համերաշխության եւ մյուս առաքինությունների դիմաց իր անգործությունն է խոստովանում, սատանաների վեհաժողովը հայերին գծտեցնելու միջոցներ է խորհում, եւ Դեւ Մրուս սատանան, որ մույնպես գիտեր հայերի առաքինությունները, գիտեր մահը, որ հայերի վարքը խիստ տարբեր է մյուս ազգերից. հայ ժողովուրդը խոնարհ է, կրոնասեր, խունկ ու մոռով հալածում է իր նման սատանաներին,

համերաշխ է ու պատվախնդիր, հանուն սուրբ հավատի պատրաստ զոհելու իր «գանձը եւ որդին», տեղնուտեղը որոշում է իր անելիքը: Նա «տարտարոսի խավարից», հոգեւորականի սեւ ֆարաջայով, մի ձեռքին՝ խաչ, մի ձեռքին՝ տերողորմյա, գալիս է Հայաստան, աննկատ մտնում հայոց մեջ եւ անասելի հաջողությամբ խառնշտորում հայ ճերբին կյանքը:

*Ուր որ դրեց իր ոտը՝ աղմուկ դարձուց
ամեն տեղ,
Հորն ու որդուն կըռվեցուց, ինքը մնաց
միշտ անմեղ...*

Եվ այդ ամենի պատճառն այն է, որ «Քրիստոս ծնալ եւ յայտնեցալ»-ի պես «մեր մեջ Մրուս Դեւը հայտնեցալ»:

Ժողովրդական ավանդագրույցի կառուցվածքային ու բովանդակային այս հատկանիշներն իրոք ավելի բնորոշ են բալլադի, քան պոեմի ժանրին, ուստի ճիշտ են վարվել Ռ. Պատկանյանի երկերի ակադեմիական հրատարակության խմբագրակազմն ու տպագրության պատրաստողները՝ «Դեւ Մրուսը» դնելով ոչ թե պոեմների, այլ ավանդությունների բաժնում (*հետաքրքիր է, որ այս երկու ստեղծագործություններն էլ՝ «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» եւ «Դեւ Մրուսը», Պատկանյանը 1858 թ. Նալբանդյանին ուղղված բացատրական մատակով ուղարկել է «Հյուսիսասիային», սակայն դրանցից ոչ մեկը չի տպագրվել, եւ վեց ամիս խմբագրության կողմից ուշադրության չարժանանալուց հետո հեղինակը հետ է պահանջել իր ձեռագրերը*):

Ծավալուն հինգերորդ չափածո երկը՝ 1859 թ. գրված «Քյոռոզլու» անավարտ վիպասանությունը, մույն՝ երկրորդ հատորում գետեղված է պոեմների բաժնում:

XVII դարից՝ Շահ-Աբասի ժամանակներից, ժողովրդական այս ազնիվ փոխառյալ հերոսական բնավորության ու քաջագործությունների մասին ավանդագրույցները տարածվել են Արեւելքի տարբեր ժողովուրդների, այդ թվում եւ հայերի մեջ: Առաքել Դավիթեցին նրան վկայում է որպես իրական անձնավորություն, որ եղել է հալածված աշխատավորության շահերի արդարամիտ պաշտպանը: Խ. Աբովյանը արեւելյան ժողովրդական էպո-

սի այդ հերոսին բնութագրել է որպես ստեղծագործող անհատականություն: Ուրեմն՝ բնական պետք է համարել նրա գրական դպրոցի երկու նշանավոր հետեւորդների՝ Ռ. Պատկանյանի եւ Դ. Աղայանի անդրադարձը Քյոռոզլու կերպարին, որ ժամանակին եղել է արդարության ծարավի՝ ժողովրդի սիրելի հերոսներից մեկը: Պատկանյանի բնորոշմամբ՝ «մրան անկեղծ սիրուն էին հայը, թուրքը եւ պարսիկը»: Պատահական չէ, որ Հայաստանում մի շարք տեղավայրեր նրա անունով են՝ Քյոռոզլու սար, Քյոռոզլու բերդ, Քյոռոզլու դռներ եւ այլն:

«Քյոռոզլու» վիպասանությունը, որն ունի նախերգանք եւ վեց հատված, մնացել է անավարտ. հեղինակը նախերգանքում խոստանում է թարիֆ անել պատմել «Քյոռոզլուի քաջ արարքը», բայց եղած հատվածներում ընդամենը նախապատրաստում է այն ու թողնում կիսատ: Բայց 1859-ից հետո ավելի քան երեք տասնամյակ տեւած ստեղծագործական կյանքում Ռ. Պատկանյանն այլեւ չի անդրադարձել նրան: Գրված յոթ հատվածներում՝ «Նախերգանք», «Աշուղ», «Քյոռոզլուի սազը», «Բազմականք խնդրում են աշուղին», «Աշուղը պատմում է», «Կուրի հաղը», «Զրուց հորն ու որդու մեջ» վերնագրերով, հերոսը չի ներկայացվում գործողության հորձանուտում, եւ նրա «քաջ արարքը» չպատմվելով մնում է անհայտ: Այս պարագայում անհնար է մույնիսկ կռահումներ անել նրա հնարավոր շարունակության վերաբերյալ, թեւեւ հեղինակն իր նամակներում ոգեւորությամբ է արտահայտվել իր ստեղծագործական ծրագրի՝ «հրաշալի բանի» ու մանավանդ հայացրած հերոսի կերպավորման մասին: Այնուամենայնիվ, աշուղի դերում հանդես եկող բանաստեղծը տպավորիչ եղանակով է դիմում ունկնդրող բազմությանը:

Արեւելյան թափառիկ աշուղներն իրենց սիրավեպերը կամ հերոսական ասքերը ներկայացնելուց առաջ «լսարանի» ուշադրությունը հրավիրելու եւ պատմվող հետաքրքրաշարժ դեպքերի կարեւորությունը ընդգծելու համար դիմում էին հավաքված ունկնդիրներին: «Նախերգանքում» ժողովրդական աշուղների այդ դիմումնաձեւը կիրառել է նաեւ Պատկանյանը:

Շարունակությունը՝ էջ 7

Ստեփան Զորյանի «Տխուր մարդիկ» պատմվածաշարը

Սկիզբը՝ 2020-ի թիվ 23–24, 2021-ի թիվ 1

Զորյանի «Տխուր մարդիկ» գիրքը հայ գրականության մեջ սպասվածից ավելի մեծ հաջողություն ունեցավ: Հոգի. Թումանյանը, Շիրվանզադեն, Նար-Դոստը, Նիկոլ Աղաբալյանը եւ ուրիշներ իրենց գրավոր կամ բանավոր խոսքն են ասում «Տխուր մարդիկ» ժողովածուի մասին: Դերեմիկ Դեմիրճյանը հետեւյալ խոսքով է բնութագրում Զորյանի ժողովածուի նշանակությունը. «Այս գրքում ես զգում եմ մեր ազգային գրականության եւ Եվրոպայի գրական ձեւերի սինթեզը, ինչ պակասում էր մեզ մինչեւ այժմ: Հայկական արձակի մեջ ազգային ձեւը շարունակում է իր առանձին գոյությունը՝ Աբովյանից մինչեւ գյուղացիները, եւ Եվրոպական ձեւը՝ Շիրվանզադեից սկսած: Առաջին անգամ այդ երկու ձեւերի համադրումը հեղինակը գտնում է այդ փոքրիկ գրքի մեջ» (*Սովետահայ գրականության պատմություն, առաջին հատոր, Երևան, 1961, էջ 89*):

Զորյանը «Տխուր մարդիկ» ժողովածուի պատմվածքներում փորձում է լուծել հոգեբանական խնդիրներ. մենակության զգացումը, «զոհի եւ ոճրագործի» փոխհարաբերությունները, սիրո մեջ մերժվածների ապրումները: Զորյանը մահը փորձում է տեսնել, թե ով է մեղավոր մարդկային տրոհված արժանապատվության համար, եւ ինչից են ծագում նրա տառապանքները:

«Շաքարաման» պատվածքը մի բանատարկյալի մասին է, ով մոր էր դուրս եկել բանտից ու գնում էր իր հոր «լավ ծանոթի»՝ խանութպան Աբելի մոտ՝ օգնություն խնդրելու: Այս պատմվածքի հերոսը ծանր հոգեբանական վիճակի մեջ է: Զորյանը պատմվածքում ցույց է տվել, որ թշվառները չունեն պաշտպաններ, այլ իրենք իրենց խղճուկ գոյությունը պետք է քարշ տան ցանկացած միջավայրում: Այս պատմվածքն ընդգծված երգիծական բնույթ ունի: Զորյանի այս հերոսը ոչ միայն չի կարողանում գտնել իր համար այդքան սպասված եւ բաղձալի աշխատանք, այլեւ ստիպված է լինում գնել այդ խանութի շաքարամանը եւ գրկվում իր գունարից: Պատմվածքի հերոսի խոսքերի եւ գործողությունների միջոցով բացահայտվում է մանրավաճառի՝ վաճառականներին բնորոշ փոքրիկ բնավորությունը, որն իր ծանոթին օգնելու փոխարեն այնպիսի իրավիճակ է ստեղծում, որ վերջինս ստիպված է լինում զոհաբերելու իր մոտ եղած չնչին գումարը:

Մյուս պատմվածքը «Վճռական մարդ»-ն է, որտեղ մոտավորապես կրկնվում է նույնը, ինչ որ պատահել էր «Շաքարաման»-ում: Այստեղ Զորյանը ցույց է տալիս վայելքների մեջ հոգիաձայների անտարբերությունը դեպի թշվառները: Վաճառական Թեոֆիլ եւ ուսանող Արշամի կերպարների միջոցով ներկայացնում է այն եսասիրական միջավայրը, որն իր ճանապարհից մաքրում է

«խեղճ մարդկանց», որոնք այնքան վճռական են իրենց մտքերի մեջ, միայնակ են եւ թույլ, անզոր եւ համակերպվող: Այդպիսի մարդկանց առջեւ կանգնում են կյանքի տերերը՝ ուժեղները: Զորյանը մեծ գեղագետին վայել խորքայնությամբ կարողացել է թափանցել մարդկային հոգու խութերը, ցույց տալ այդ հոգում տեղ գտած անհուն թախիծի պատճառները: Նա իր գրական գործունեության ընթացքում շոշափել է բազմապիսի թեմաներ, որոնք կարելի է համախմբել հետեւյալ ընդհանուր վերնագրերի տակ. գավառի եւ մասամբ քաղաքի մանր ու միայնակ մարդկանց բարքերն ու տիպերը, գյուղը, մահապետական անհետացող տիպերը, պատերազմի հետեւանքները, պատերազմի ազդեցությունը մանր բուրժուական խավերի վրա եւ այդ ազդեցության տակ նրանց վերափոխման ընթացքը եւ սոցիալական առօրյան: Այդ մանր, միայնակ ու տխուր մարդկանց նկարագրելիս հեղինակը չի գործադրում խիստ մերկացնող մեթոդ, քանզի այդ մարդիկ սոցիալական անարդար կարգերի զոհերն են: «Շաղկերուց առաջ պետք է նրանց խղճալ, ափսոսալ մարդկային էության այդ աստիճան մանրացման, քաղքենիական բռնության եւ մտավոր աղքատության համար: Այդ է պատճառը, որ Զորյանի հումորը հաճախ աննկատելի, թերեւս մույնիսկ իրեն համար փոխվում է կարեկցանքի ու խղճահարության» (*Ն. Թիրաբյան, «Ստեփան Զորյանի*



գրական հայացքները», *Բանբեր Երեւանի համալսարանի, Երեւան, 2001, էջ 159*):

Գյուղը Զորյանի ստեղծագործությունների մեջ զգալի տեղ է գրավում, գյուղի վիճակը տարբեր նովելներում դիտվում է տարբեր տեսանկյուններից. այդ նովելների շոշափած թեմաների համադրումը կարող է տալ 20-րդ դարի առաջին քառորդի հայ գյուղի հարաբերականորեն ամբողջական պատկերը:

Շարունակությունը՝ էջ 6, 8


Սյունյաց ուսումնագիտական կենտրոնների ավանդը հայ մշակույթի անդամսանում (V–XII դդ.)

Իր ամրակուռ բերդերի, անառիկ ամրոցների, մեծաքանակ զինված ուժերի եւ ռազմապաշտպանական հզորության շնորհիվ Սյունիք աշխարհն առանձնահատուկ հռչակ է վայելել ու հսկայական նշանակություն ունեցել Մեծ Հայքի տարածքային ամբողջականության պահպանման եւ պետական սահմանների անսասանության ապահովման գործում: Լեռնաստանը միաժամանակ ծանրակշիռ ավանդ է ունեցել Հայաստանի հոգեւոր-մշակութային կյանքում՝ նպաստելով հայալեզու դպրության, գիտության, մատենագրության, թարգմանական գրականության զարգացմանը եւ ազգային ինքնության ու ավանդույթների պահպանմանը:

Սյունյաց աշխարհի վարչական ու հոգեւոր կենտրոնը Շողակ գավառի Շաղատ գյուղաքաղաքն էր, ուստի ուսումնագիտական կենտրոնը եւս ստեղծվում է այստեղ: Շաղատում գործող Սյունյաց վարդապետարանը հարատւում է մինչեւ IX դար: Սյունիքի մյուս դպրոցների համար վարդապետներ ու ընթերցողներ պատրաստում էր հենց Շաղատի վարդապետարանը. այն Սյունիքի հոգեւոր-կրթական գործի նվիրյալների քուրան ու դարբնոցն էր: Շաղատի վարդապետարանի հիմնադիրն է համարվում Անանիա Սյունեցի եպիսկոպոսը, որը սուրբ Մեսրոպ Մաշտոցի աշակերտն էր եւ եպիսկոպոս է ձեռնադրվել սուրբ Սահակ Ա. Պարթեւ կաթողիկոսի ձեռքով: Գ. Գալեմբյարյանը նկատում է. «Սիւնեաց վարդապետանոցը՝ երանաշնորհ թարգմանչաց ժամանակի գեղեցիկ ծնունդներն են՝ Ս. Մեսրոպի աշակերտութենէն Անանիայ, որ Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրուած էր Ս. Սահակ հայրապետէն, առաջին անգամ

հաստատեց իր երկրին մէջ դպրոց մը, եւ իր աշակերտներէն Բենիամինի յանձնեց անոր տեսչութիւնը»:

Ըստ պատմիչ Կորյունի հաղորդած տեղեկությունների՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցը գրերի գյուտից հետո մեծ եռանդով ու ոգեւորությամբ ձեռնամուխ է լինում Հայաստանում հայագիր դպրոցական ցանցի հիմնադրմանը եւ կրթական գործի ծավալմանը: Սյունիքում Մաշտոցի կրթալուսավորական ձեռնարկումներին նյութապես եւ բարոյապես աջակցում է Սյունյաց տանուտեր եւ նահապետ Վաղինակ իշխանը: Մաշտոցը, առաջին հերթին, աշակերտներ է ընտրում Սյունիքի առավել խոլ եւ վայրենաբարո բնակավայրերից՝ «եւ ժողովեալ մանկունս առ ի միւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զգիւղաբարոյ իողմանցն. եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել...», քանի որ տեղացի ուսուցիչները շատ ավելի լավ գիտեին տեղական բարբերն ու ավանդույթները եւ հետագայում ավելի պատրաստակամ, ջերմեռանդ, սիրով ու նվիրումով կաշխատեին ուսումնատենչ երեխաների հետ: Որոշ ժամանակ անց Մաշտոցը հենց այս երեխաներից կրթված ուսումնականներ, եպիսկոպոսներ ու թարգմանիչներ պատրաստեց: Մաշտոցի շնորհիվ սյունեցի աշակերտների թվում էր Անանիան՝ «այս սուրբ եւ երեւելի հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ», որին Մաշտոցը Սյունյաց եկեղեցու եպիսկոպոս է կարգում:




Մեսրոպ Մաշտոցի՝ Սյունիքում գործած նշանավոր աշակերտներից հիշատակվում է նաեւ Բենիամինը, թեւեւ աղբյուրներում նրան տրվում է «աղուան ազգաւ» բնորոշումը, իսկ որոշ ուսումնասիրողներ էլ նրան համարում են հայ, բայց Աղվանից աշխարհից: Աղվանից գիրը ստեղծելիս Մաշտոցին աջակից է եղել հենց Բենիամին երեցը: Հավանական ենք համարում, որ Բենիամինը ոչ միայն հայ էր, այլեւ ծնունդով սյունեցի, քանզի դժվար թէ այլազգի մեկը Սյունիքում այդքան հարազատորեն, բարեխղճորեն ու հետեւողականորեն ծավալեր հայ երեխա-

ների հայեցի կրթության ազգանվեր գործը: Մաշտոցը Սյունյաց առաջին քարոզչական առաքելության ավարտին իր ընտրյալ աշակերտներ Անանիային եւ Բենիամինին թողնում է Սյունիքում ու նշանակում թարգմանիչ եւ ուսուցիչ. «Իսկ սուրբ այրն Աստուծոյ, թողեալ անդ յաշխարհին Սիւնեաց թարգման եւ ուսուցիչ յընտրեալ աշակերտաց իւրոց զԲենիամին եւ զԱնանիայ, որ ձեռնադրեցաւ յետոյ յեպիսկոպոսութիւն աշխարհին զի մի վերստին լանկցի ի մոլորութիւն եւ ինքն զնայ առ սուրբն Սահակ»:

Շարունակությունը՝ էջ 7

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅԸ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ



Սկիզբը՝ 2020-ի թիվ 18–24, 2021-ի թիվ 1

Բե «Նոր Բյուզանդիոն» դրամայում, թե՛ պատմական անցյալին նվիրված այլ ստեղծագործություններում, թե՛ գավառաշխարհին վերաբերող պատկերներում թոթովենցը գեղարվեստորեն հաստատում էր լավի, գեղեցիկի, բարու եւ մարդկային իր որոնած հիմքերը: Գրողը հայտնաբերեց ու բարձրացրեց մարդկային հոգեկան աշխարհի այնպիսի շերտեր, որոնք, ի վերջո, հոգեբանական առումով հաղորդակցվում են մեծ աշխարհի հետ՝ համամարդկային կշիռ ու որակ ստանալով: Գրողի հերոսները պայքարում են հասարակության մեջ տիրող անիրավությունների դեմ, քանի որ հաճախ են հայտնվում խարդավանքների ոլորաններում: Եվ չնայած իրենց կորուստներին՝

նրանք քայլեր են անում ճշմարտության վերահաստատման, արժեքների վերագնահատման համար: Այդ գաղափարախոսությամբ էլ «Նոր Բյուզանդիոն» դրամայում ստիպված հրաժարվում է իր ընտանիքից, կրոնից, բայց կարողանում է պատժել անիրավներին՝ Հալետին ու Իսխելին, որ հետագայում այլ մարդիկ չդառնան նրանց խարդավանքների զոհ, ինչպես Տոուզյան եղբայրները:

Իդեալի հիմքով հերոսների հակամարտության այս լուծման կրողը թոթովենցն է: Նա միմյանց դեմ է հանել չարին ու բարուն եւ իր գրողական աշխարհում ապրող իդեալի թելադրանքով հաղթանակի հասցրել վերջինիս: Հաղթում է Հաջի Չելեբին, ասել է թե՛ հաղթում է գրողի իդեալը՝ ազգային կյանքի, մարդկային բարձրագույն արժեքների, մարդանիստի ազատության, խղճի ու ճշմարտության հարցերում:

«Նոր Բյուզանդիոն» դրամայում թոթովենցը խոսքի ու նկարագրի տարբեր հնարանների գերազանց կիրառմամբ ստեղծել է պատմական շրջանի կյուրիտը: Իր պատկերավոր ու վառ համեմատություններով, ժողովրդական լեզվամիջոցների առատ գործածությամբ նա ստեղծում է մի ինքնատիպ աշխարհ, որը հարազատ է ընթերցողին: Այս տեսանկյունից թոթովենցն այն սակավաթիվ գրողներից է, որոնք հեռավոր անցյալին մոտենում են համամարդկային արժեքների տեսանկյունից, իրենց բազմաշերտ ու գունագեղ լեզվամշակույթը ստեղծում ոչ միայն հեղինակի կամ քնարական հերոսի խոսքի միջոցով, այլեւ լսելի են դարձնում իրենց հերոսների խոսքը, որոնք բնական, կենդանի երկխոսությունների, գրույցների միջոցով անկաշկանդ ու անմիջական կապ են ստեղծում ընթերցողի հետ:

Ինքը՝ հեղինակը, անմիջական մասնակիցն է այդ ամենի, բայց նաեւ աննկատ մասնակիցը, եւ դա հնարավորություն է տալիս նրան գրողի աչքով աննկատ հետեւելու իր հերոսներին, վերարտադրելու հարազատ գյուղաշխարհի բնապատկերները, բարբերն ու սովորույթները, հետեւելու կատարվող իրադարձություններին: Նշված առանձնահատկություններով «Նոր Բյուզանդիոն» դրաման առանձնակի ու մնայուն տեղ է ապահովել իր համար: Ժամանակին այն բեմականացվել է Փարիզում եւ մի շարք այլ հայկական թատրոններում:

Յուրաքանչյուր ստեղծագործող, ըստ էության, իր գրվածքներում ներկայացնում է լեզվի պատմական զարգացման տվյալ ժամանակաշրջանի վիճակը, եւ թոթովենցի գրական ժառանգության քննությունը եւս պետք է կատարել ոչ միայն պատմական զարգացումների շրջանակում, այլեւ անհրաժեշտ է նկատի ունենալ տվյալ ժամանակաշրջանի գեղարվեստական լեզվի զարգացումն առհասարակ: Այս առումով թոթովենցի ստեղծագործություններն ուշադրության են արժանի ոչ միայն բովանդակային արժեքներով, այլեւ լեզվաճակատ տեսանկյունից, քանի որ այս դեպքում գործ ենք ունենում գրական հայերենի երկու ճյուղերի ինքնատիպ դրսևորման հետ:

Ամփոփելի է, որ գրողի ստեղծագործության խոսքարվեստի ուսումնասիրությունը սերտորեն առնչվում է տվյալ ժամանակաշրջանի համաժողովրդական լեզվի եւ գեղարվեստական գրականության լեզվի օրինաչափություններին, անդրադառնում դրանց հիմնական առանձնահատկություններին, զարգացման ուղիներին եւ հեռանկարներին: Այն հզոր առաջընթացը, որ գեղարվեստական լեզվի մեջ տեղի էր ունեցել նախորդ դարասկզբին, չէր կարող իր դրական ազդեցությունը չունենալ թոթովենցի ստեղծագործությունների վրա: Նա մուտք գործեց գրականություն, երբ թե՛ արձակում, թե՛ պոեզիայում գեղարվեստական խոսքն արդեն մշակման լուրջ ճանապարհ

էր անցել, ինչպես նաեւ հստակ առանձնացել էին արեւմտահայերեն եւ արեւելահայերեն գրական լեզուների համակարգերը: Ինչպես նշում է Ս. Մելքոնյանը, գրողի գործածած լեզվամիջոցները «կարող են հետագայում դառնալ եւ հաճախ դառնում են գրական լեզվի սեփականություն: Դրանով գրողը նպաստում է գրական լեզվի հարստացմանը, արտահայտչական միջոցների կատարելագործմանը» (Ս. Մելքոնյան, *Հոլի. Թումանյանը եւ արեւելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Երևան, 1986, էջ 39*): Սյուս կողմից՝ որեւէ ստեղծագործության գեղարվեստական արժեքը ճիշտ գնահատելու համար բավական չէ մանրամասն քննության առնել գրողի ապրած ժամանակաշրջանը, գրական ուղիությունը, որին հետեւել է ստեղծագործողը, ստեղծագործության տեսակն ու ժանրը: Անհրաժեշտ է ուսումնասիրության առարկա դարձնել գրողի լեզուն ու ոճը: Գրողի ստեղծագործությունը, նրա հեղինակային անհատականությունը, նրա հերոսները, թե՛ մաները, գաղափարներն ու կերպարները մարմնավորված են նրա լեզվում եւ նրանում ու նրա միջոցով կարող են ըմբռնվել: Գրողի ոճի, պոետիկայի, աշխարհայացքի հետազոտությունն անհնար է առանց նրա լեզվի մանրակրկիտ իմացության:

Գրողի արձակի լեզվահամակարգի ընդհանուր զարգացումը բաժանվում է երեք հիմնական շրջանի.

1. արեւմտահայերեն լեզվաշրջան, երբ թե՛ հեղինակի, թե՛ կերպարների խոսքը ներկայացվում է բացառապես արեւմտահայերեն, երբեմն խոսքային միջավայրով պայմանավորված՝ գործածվում են բարբառային լեզվատարբեր:

2. լեզվական միջոցների ընտրության շրջան, երբ կերպարների խոսքը մնում է արեւմտահայերեն, երբեմն՝ բարբառային, սակայն հեղինակի խոսքում կիրառվում են եւ արեւմտահայերեն, եւ արեւելահայերեն բառաշերտեր:

Շարունակությունը՝ էջ 6, 8

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԸ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ


Սկիզբը՝ էջ 5

3. արեւմտահայերեն եւ արեւելահայերեն լեզվատարբերակների համատեղման եւ ներդաշնակման շրջան, երբ հստակորեն ընտրվում են հեղինակային խոսքի համար արեւելահայերեն, իսկ կերպարների խոսքի համար արեւմտահայերեն տարբերակները:

Այս խմբավորումը հնարավորություն է ընձեռում առավել ճշգրիտ պատկերացում ունենալու գրողի լեզվի զարգացման փուլների մասին: Գաղտնիք չէ, որ միեւնոյն հեղինակի ստեղծագործություններում կարող են դրսևորվել ոճական տարբեր առանձնահատկություններ, եւ այս տեսանկյունից բոլորովին այլ ոճական արժեք կարող են ունենալ տարբեր շրջաններում գրված գործերը: Ի տարբերություն մյուս ստեղծագործությունների՝ «Նոր Բյուզանդիոն» դրամայի լեզվում չի նկատվում արեւելահայերեն ու արեւմտահայերեն բառապաշարի խառնուրդ: Այսինքն՝ այս առումով «Նոր Բյուզանդիոն» դրաման առանձնանում է Թոթովենցի մյուս դրամաներից:

Դրամայի որոշ հատվածներում ոճական նկատառումներով կիրառված են բառային հնաբանություններ՝ գրաբարյան որոշ քերականական ձևեր: Դիտարկենք օրինակներ.

«Սուլթան եւ որդի սուլթանների, սուլթան խանը դազի, հաջորդ փառավոր մարզարեի, թագավոր երկու աշխարհաց, սովեր աստծո ի վերայ երկրի, օգոստոսափառ կայսր եւ խալիֆա, հրամայում է, որ այս ֆերմանս ձեզ հասնելուն հայտնի լինի, որ արքունի փողերանոցիս պետ Տյուլյանների՝ զեղծարարության պատճառով գլխատումից հետո աճուրդի են հանվում նրանց ողջ կահ-կարասիքը: Աճուրդը պիտի տեղի



ունենա 24 ժամվա ընթացքում Տյուլյանների ապարանքում» (նույն տեղում, էջ 284):

«Քալ լիցի, որ մի որեւէ իսլամ մտածի, թե խալիֆան հանցավոր կարող է լինել...» (նույն տեղում, էջ 336):

«Պաղատում եմ իմ փաղիշահից եւ խալիֆայից՝ ներել նրանց իրենց կուրությունը եւ ազատ կացուցանել նրանց իրենց կրոնի մեջ» (նույն տեղում, էջ 302):

Հնաբանների կիրառություններով Թոթովենցը գեղարվեստական մի շարք նպատակներ է հետապնդում: Ինչպես հայտնի է, հնաբանությունները սահմանափակ գործածություն ունեցող, տարբեր պատ-

ճառներով սովորական գործածությունից դուրս եկած բառեր են, որոնց դերը գեղարվեստական խոսքում ավելի շատ ոճական, արտահայտչական է, քան անվանողական (Լ. Եզեկյան, *Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 125*):

Պատմական որոշակի ժամանակաշրջանի երանգավորում ստեղծող, հեղինակի ասելիքի ընդգծող գրաբարյան բառերը խոսքի ոճավորման անփոխարինելի միջոցներ են: Հնաբառերը տողերին ոչ թե ժամանակային-պատմական երանգ են հաղորդում, այլ նպաստում են ապրումի արտահայտչականությանը:

Թոթովենցի դրամայում ոճական արժեքով հատկանշվում են նաեւ ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ հարադրությունների եւ դարձվածային արտահայտությունների կիրառությունները, ինչպես օրինակ՝

1. «Եթե չենք լինելու, գլխներիս ճարը տեսնենք» (նույն տեղում, էջ 279):

2. «Այս դեպքից հետո կարող ենք կրակի տալ Տյուլյանների ողջ ապարանքը» (նույն տեղում, էջ 280):

3. «Ինձ միայն մնում է արցունք թափել ու աղոթել» (նույն տեղում, էջ 280):

4. «Ներեցեք ինձ, ամիրա, խոսում եմ հոգու խորքից» (նույն տեղում, էջ 281):

5. «Այս սրանցից ավելի խոշոր ոճիրները կույ են գնացել ժամանակի անդունդում, ինչո՞ւ» (նույն տեղում, էջ 382):

6. «Պետք էր հրահանգել լավ աչքով նայել անհավատ հայերին. նրանք իմ կայսրության օգտակար տարրերն են» (նույն տեղում, էջ 295):

7. «Վաղը կպատմեն, աղջիկս, հիմա սիրտ չունեն» (նույն տեղում, էջ 314):

Թոթովենցի դրամայի լեզվի հարստությունն են կազմում գունեղ մակդիրները, որոնք լեզվի արտահայտչականության կարեւոր գործոններից են: Ինչպես հայտնի է, մակդիրը ոճական այնպիսի հնարան է, որի միջոցով տրվում է առարկայի, երեւոյթի կամ գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ հատկանիշը, այլ նրա գեղագիտական բնութագրությունը՝ զուգորդված հեղինակի կամային-վերաբերական մրբերանգներով: «Մակդիրը առարկան կամ երեւոյթը գեղագիտորեն բնութագրող որոշիչ է», որի հիմքում ընկած է փոխաբերական իմաստ (Պ. Պողոսյան, *Խոսքի մշակույթի եւ ոճագիտության հիմունքներ, գ. 2, Երևան, 1991, էջ 44*):

Մակդիրը՝ որպես այլաբերության տեսակ, յուրօրինակ ոճական հնարան է դրամատուրգի գեղարվեստական մտածողության մոր միտումներն արտահայտելու համար: Գունեղ եւ ինքնատիպ մակդիրները ոչ միայն ընդգծում, առանձնացնում են առարկայի, երեւոյթի այս կամ այն հատկանիշը, այլեւ դառնում են հուզական վերաբերմունքի, հոգեբանական արժեւորման գեղեցիկ ու բազմերանգ արտացոլանք: Դիտարկենք դրամայում մակդիրների գործածության օրինակներ.

1. «Միթե ավելի կարեւոր բան կա, ամիրա, քան խորախոր սուզը» (նույն տեղում, էջ 280):

2. «Չեմ սիրում, երբ ծովը կորցնում է իր կախարդական կապույտը» (նույն տեղում, էջ 295):

3. «Մայրիկ, դու գիտես նրա անսահման իմաստությունը» (նույն տեղում, էջ 295):

Շարունակությունը՝ էջ 8

Ստեփան Զորյանի «Տխուր մարդիկ» պատմվածաշարը

Սկիզբը՝ էջ 4

Զնայած գյուղի մասին գրված բազմաթիվ երկերի, այնուամենայնիվ գյուղացու հոգեբանությունը մեր գրականության մեջ շատ քիչ է դրսևորված, Զորյանն այս ուղղությամբ արել է որոշ քայլեր: Այս տեսակետից ուշագրավ է մանավանդ «Սատանա» նովելը՝ մեկը Զորյանի ամենահաջողված նովելներից: Գյուղացի երիտասարդի կերպարը, նրա ներքին աշխարհը, նրա զարմանալի միամտությունը, նրա դատողություններն ու հասկացողությունները տրված են շատ բնորոշ եւ կենդանի գույներով: Այս նովելի մեջ դրսևորվել են հեղինակի պատմելու, կառուցելու տաղանդը եւ նուրբ դիտողականությունը: Այստեղ Զորյանը գործադրել է բնութագրման իր մեթոդներից մեկը, այն է՝ երեւոյթը հերոսի հոգեբանությամբ եւ ըմբռնումներով ներկայացնելը, եւ հասել հիմնալի արդյունքի:

19-րդ դարի 80-ական թվականներին ռեալիզմի առաջ դրված էին կնոջ ազատության, կնոջ իրավունքների պաշտպանության, իրավահավասարության եւ ապահարգանի խնդիրները, իսկ 20-րդ դարի երկրորդ տասնամյակի Զորյանը ներկայացնում է ընտանեկան բարքերը: Կապիտալիզմի այլասերող, բարոյագրող ազդեցությունը նկարագրված է «Կրակ» վիպակում: Այս վիպակի մեջ հեղինակը նկարագրում է անառականոցի բացումը մի փոքրիկ գավառական քաղաքում: Երկաթուղուց հետո, որը մանր գործատերերի համար եղավ կործանարար, սա երկրորդ խոշոր այն երեւոյթն էր, որ քաղաքին բերում էր բարոյական փլուզում: Երեւոյթը նոր է եւ անսպասելի, դեռեւս տիրում են նահապետական բարքերը, «կողմնակի» սերը դեռ անձանոթ է մարդկանց, պարկեշտությունը, համեստությունը համարվում են կանանց զարդեր. հանկարծ քաղաք են մտնում մերկ ու շապրված կանայք, եւ ամոթխալի քաղաքացիների առաջ փռում իրենց, ինչպես կասեր Զոհրապը՝ «Վաճառիկ հրապույրները»: Այդ տիղմի մեջ են ընկնում մեծ թվով զոհեր, դրանց շարքին է պատկանում իր ընտանեկան հարկը միայն ճանաչող դերձակ Օհանեսը, որի ընտանեկան դրաման մյուս է ծառայել այս վիպակի համար: Օհանեսի կինը՝ Մարիամը, ամեն

կերպ փորձում է փրկել ամուսնուն, դիմում է զանազան միջոցների, բայց կիրքը տանում է Օհանեսի «կամքը, ինչպես վայրի ձին հեծվորին», 18-ամյա կապուտաշյա Լիզայի կանչող ժպիտը, հրավիրող հայացքը նորից եւ նորից ձգում են նրան:

Վիպակի գլխավոր հերոսը՝ Մարիամը, վերին աստիճանի բարդ է: Նրա հոգեկան ապրումները չեն ենթարկվել անհրաժեշտ մշակման, կերպարի զարգացումը հետևողականորեն չի տրված, սակայն հեղինակին հաջողվել է ներկայացնել խանդի ազդեցության տակ Մարիամի ունեցած ապրումները, որոնց աստիճանական զարգացումը տանում է նրան մի վճռական քայլի. Մարիամը որոշում է այրել պոռնկանոցը: Այս քայլին նախորդող հոգեբանական երևույթների վերլուծությունը վիպակում տրված է հմտությամբ: «Կրակ» վիպակը դրված է Զորյանի գրական գործունեության առաջին շրջանում եւ միակ երկն է, որի մեջ համակերպվող, զոհ լինելու հակամետ հերոսների փոխարեն նկարագրվում է բողոքող, ընդվզող կնոջ կերպարը:

Զորյանի երկերի հաջողության պատճառն այն է, որ նա նկարագրում է իրեն շատ ծանոթ կյանքը, բացի դրանից՝ նա երեւոյթը դիտում է այդ միջավայրը բնորոշող հոգեբանությամբ, դատողություններով. այս ձեւով հեղինակը կարծես վերանում է, եւ ընթերցողը գործ ունի սոսկ երեւոյթների եւ նրանց կրողների հետ: Իբրեւ ռեալիստ գրող՝ Զորյանը հետեւում է դեպքերի եւ մարդկանց զարգացմանը, վերափոխմանը եւ իրապաշտորեն արտաբերում այդ ամենը: Իր ապրած եւ գրական գործունեության ժամանակաշրջանով գրողը պատկանում է խորհրդահայ գրականությանը: Սակայն առաջին եւ երկրորդ շրջանների միջեւ չի կարելի չնկատել որոշակի կամուրջ: Այդ կամուրջը նկատելի է եւ ստեղծագործական մեթոդի փոփոխման, եւ աշխարհայացքի փոփոխության մեջ: Զորյանի՝ «մանր ու միայնակ» մարդկանց աստիճանական փոփոխման լավագույն հայելին առաջին ժողովածուն է: Այստեղ փոխվում են մարդիկ, փոխվում են նրանց մտածողությունն ու հոգեբանությունը, փոխվում է նաեւ Զորյանի վերաբերմունքը դեպի կյանքը: Ավարտելով «Կրակ» պատմ-

վածքը՝ Զորյանը դուրս է բերում հակադրվող հերոսուհու տեսակը: Հետագայում նրա պատմվածքի մեջ արդեն երեւում են դասակարգային հակադրության պահերը: «Վախ»-ի հերոս Դանիելը մղում է գիտակցված պայքար. նա կարծես վրեժից դրդված անցել է հեղափոխության կողմը: Այդ կերպարի մեջ դեռեւս չի երեւում կազմակերպված մարդը, որն ինքնին խոսում է միայնակության զգացումով լցված հերոսի մասին: Սակայն կերպարն անցման կամուրջ է դեպի Հովսեփը՝ «Հեղկոմի նախագահը»: «Հեղկոմի նախագահը» Զորյանի առաջին երկն է, որում նկարագրում է պայքարող մարդուն: Հեղինակն իր գործերում կյանքն արդեն դիտում է զարգացման ընթացքում, լինելիության մեջ՝ բոլորովին հակառակ իր որոշ գործերի, որտեղ կյանքը լճացած է, անշարժ: Զորյանի հերոսների զարգացման ուղին բարդ է եւ հետաքրքրական՝ ծեր Պողոսից («Բարեկամներ») մինչեւ Հովսեփը («Հեղկոմի նախագահը»):

Հեղինակի վերջին ստվար աշխատությունը «Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական հրաշալի գիրքն է՝ հասցեագրված հիմնականում պատանիներին: Այս վեպի մեջ հեղինակն անդրադառնում է իր մանկական տարիներին, նկարագրում գավառական փոքրիկ քաղաքը, որն այնքան ծանոթ է Զորյանի ընթերցողներին: Այստեղ նա ընդհանրացնում եւ իմի է բերում իր տպավորությունները, սակայն հեղինակի հայացքները փոխվել են, փոխվել է նրա ստեղծագործական մեթոդը. նա ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլեւ դատաւճիռ է կարդում այդ իրականության նկատմամբ: Այնուհետ նրա ստեղծագործություններում կյանքն ավելի հախուռն է դառնում, անմիջապես աչքի է զարնում գավառի եւ մեծ քաղաքի տարբերությունը, զգացվում են քաղաքային կյանքի եռուզեռը, շարժունությունը, հակասությունները: Իր աշխատության մեջ ընթերցողի աչքի առջեւով անցնում են բազմաթիվ կերպարներ, որոնք ներկայացնում են գավառի ու քաղաքի կյանքը:

Զորյանի արվեստի համար ամենից ավելի բնորոշ են պարզությունն ու բնականությունը՝ լեզվի, ոճի, պատկերների եւ տիպերի կերտման մեջ: Այդ պարզությունը

ներդաշնակվում է այն կյանքին, որի արվեստագետն է Զորյանը: Զորյանն իր ողջ ստեղծագործական էությանը իր միջավայրի ծնունդն է, նա չի ստեղծում, չի խտացնում իր նկարագրած կյանքի գույները:



Զորյանի՝ իր միջավայրից ստացած տպավորությունները հենց ատաղձն են իր ստեղծագործությունների: Դա ցայտուն կերպով երեւում է Զորյանի պատկերավորության միջոցների մեջ, ինչպես օրինակ՝ ալիքները, որոնք «մռնչալով զարնվում են միմյանց», համեմատված են «իրար կրծոտող շներին» հետ, կամ «ջրվեժը» նմանեցված է «ժայռից կախված առասպելական մորուքի»-ի, որ ցնցվում եւ տատանվում է հովից: Յուրօրինակ է անձրեւի տեսարանի նկարագրությունը. «Կայծակը փայլատակեց, եւ նրա լույսի մեջ անձրեւը թվաց երկնքից կախված առեջի թելեր»: Զորյանը հաճախ ինքնատիպության է հասնում նաեւ հերոսների արտաքին նկարագրությամբ:

Շարունակությունը՝ էջ 8

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՑԱՆ (1830–1892)

Սկիզբը՝ էջ 4

Ավանջ արեք, թարիֆ անեն Քյոռոլուի
քաջ արարքը,
Քյոռոլուին շատ են սիրել մեր պապերը ու
մեր հարքը:

Բայց տարասեռ ու տարբեր հասակի
ունկնդիրներին իր երգախառն խոսքի եւ
ասելիքի կարեւորությունն ավելի ընդգծելու
համար նա շարունակել է իր հավաստիա-
ցումները.

Անգաճ արեք քյոռ աշուղիս՝ ձեզ հրաշալի
բան են ասում,
Ջահել տղերք, լավ ուշք դրեք՝ զարմանալի
բան են ասում,

Սիրուն կուսանք, լավ միտք դրեք,
արտասուելի բան են ասում:

Հարգո՛ւ ծերեր, ինձ լսեցե՛ք, ձեր պապերու
բանն են ասում,

Հայ քրիստոնյայք, ազգի իշխանք,
խորհրդավոր բան են ասում... (2, 36):

Թափառական աշուղի այս դիմումնա-
ձեւն օգտագործել է Հովհ. Թումանյանը
հանրահայտ «Թմկաբերդի առումը» պոե-
մի նախերգանքում, որտեղ ժողովրդական
աշուղների ոճով դիմում է հավաքված բազ-
մությանը՝ պարոններին, սիրուն տիկնանց,
ջահել տղերքին, եւ նրա սեղմ խոսքը գերծ է
ավելորդություններից, դիպուկ է ու նպա-
տակասլաց.

Հե՛յ, պարոններ, ականջ արեք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ջահել տղերք,
Լավ ուշք դրեք իմ խաղին:

Ավելին. Թումանյանը կատարելագործել

է նախորդների գեղարվեստական պատկե-
րի կառուցման սկզբունքներն ու պատկե-
րավորման-արտահայտչական միջոցները:
Բերենք նաեւ հետեւյալ բնորոշ օրինակը:
Իհարկե, նախ Ռ. Պատկանյանն է աշխար-
հաբար լեզվամտածողությամբ կիրառել
հարցական հնչերանգով ճարտասանա-
կան դարձույթը, որը հարցունով հաստա-
տում է իրողությունը: Բայց նրա խոսքը դե-
ռես պարունակում է բազա, է՛ծ, է՛ն, է՛նտեղ,
հանքնակ հնացած ու բարբառային բառեր.

Են բարձր ժեռուտ սարի կատարին բազա՛ է
նստած,

Թե՛ է՛ծը վայրի ջըլոտ ոտներով է է՛նտեղ
հասած,

Ամալի կտոր է կըպել երկնամերձ էդ սարի
ծայրին,

Թե՛ ծառ կամ մացառ բըսնում, աճում են
հանքնակ վայրին:

Հետագայում նույն բանադարձույթն օգ-
տագործել է նաեւ Հովհ. Թումանյանը, սա-
կայն նրա ճարտասանական հարցումները,
հաստատական պատասխան ենթադրելուց
բացի, ավելի որոշակիանում են նաեւ հաս-
տատական նախադասությամբ.

– Են Թըմկա ձորում սեւ մմսն է ճայթում,
Են շամթն է ճայթում էնպես ահարկու:
– Են Թըմկա ձորում Թաթուլն է կըռվում,
Են թուրն է շաջում էնպես ահարկու:

Գեղարվեստական մտածողության եւ
գրական լեզվի զարգացման բնական ըն-
թացքն է սա. նախորդներն իրենց անհա-
տական հզոր կարողություններով, հայրե-
նի եւ օտար ավանդների համադրումներով
ստեղծել են գաղափարական ու գեղագի-

տական կայուն հիմքեր, հաջորդները
հղկել, կատարելագործել են պատկե-
րավորման նախնական արտահայտ-
չաձեւերը: Այդպիսով լեզուն մաքրվել
է գրաբարյան, բարբառային հնացած
եւ օտար բառաձեւերից, գրականա-
ցել է, նրբացել ու ճկունացել, աստի-
ճանաբար ձեռք բերել պատկերա-
վորման-արտահայտչական ավելի
բարձր մակարդակ: Ահա այսպես է
արեւելահայ իրականության մեջ Ար-
վան–Նալբանդյան–Պատկանյան–
Շահազիզ սերունդը նախապատ-
րաստել բանաստեղծական հաջորդ՝
Զիվանի–Հովհաննիսյան–Թումա-
նյան–Իսահակյան–Տերյան սերունդին,
իսկ արեւմտահայ Ալիշան–Պեշկեպաշ-
յան–Դուրյան սերունդը՝ Սիամանթո–Մեծա-
րենց–Վարուժան – Ռ. Սեւակ սերունդին: Այս
օղակներից է կազմված գեղարվեստական
զարգացման շղթան. դրանցից յուրաքան-
չյուրը նախորդի եւ հաջորդի հարաբերու-
թյամբ, անշուշտ, իր կարողությունների
չափով է նպաստել լեզվի ու գեղարվես-
տական մտածողության առաջընթացին եւ
իր տաղանդավոր երկերով հարստացրել
հայ գրականությունը:

Գրականությունն ու գեղարվեստական
մտածողությունը միշտ էլ ենթակա են հան-
րային կյանքում կատարված հիմնային փո-
փոխություններին, որոնք արտահայտվում
են համապատասխան մոր ձեւերով: Ժամա-
նակների ու հանգամանքների թելադրան-
քով ի հայտ են գալիս գաղափարական ու
գեղագիտական մոր պահանջներ, որոնք
պիտի ստանան գեղարվեստական արտա-
հայտության համապատասխան ձեւեր:



Ամեն մի ձեւական մորություն իր հետ բե-
րում էր նաեւ բովանդակային մորություն, եւ
հակառակը՝ բովանդակային ամեն մորույթ
պահանջում է արտահայտման մոր ձեւ:
Այսպես է ապահովվում գեղարվեստական
մտածողության առաջընթացը:

1870–1880-ական թթ. Պատկանյանն այ-
լեւս չէր կարող մնալ նախկին՝ 1850–1860-
ական թթ. մտածողության մակարդակում,
քանի որ մոր տասնամյակները բերել էին
մոր իրավիճակների թե՛ գրողի անձնական
եւ թե՛ երկրի հասարակական-քաղաքական
կյանքում: Հայության համար եկել էին մոր
հույսերի եւ մոր հուսախաբությունների ժա-
մանակներ, որոնց պիտի արձագանքեր
իր ժողովրդի ճակատագրով մտահոգ գեր-
զգայուն բանաստեղծը:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սյունյաց ուսումնագիտական կենտրոնների ավանդը հայ մշակույթի անդաստանում (V–XII դդ.)

Սկիզբը՝ էջ 5

Կորյունի վկայությամբ՝ Մեսրոպ Մաշտո-
ցին Հայաստանի արեւելյան նահանգնե-
րում, մասնավորապես՝ Սյունիքում, դպրոց-
ներ հիմնելու, լուսավորություն տարածելու
եւ հայեցի դպրության ամրապնդման գոր-
ծում աջակցել է Վասակ Սյունին, որն իր հո-
րեղբայր Վաղինակից խլել էր Սյունյաց տա-
նուկությունը:

Սահակ Պարթեւ հայրապետն ու Մեսրոպ
Մաշտոցը բարձր էին գնահատում Սյունյաց
վարդապետարանի ներկայացուցիչների
ունակությունները. հատկապես հունարե-
նից թարգմանություններ կատարելու եւ
դրանց վերաբերյալ ուսումնասիրություն-
ներ, մեկնություններ գրելու դժվարին,
տքնաջան ու պատասխանատու գործը
վերապահում էին հենց Սյունյաց վարդա-
պետարանի խորագիտակ ու քաջահմուտ
վարդապետներին: Այս մասին, հիւրավի,
պարծանքով է վկայում պատմիչ Ստե-
փանոս Օրբելյանը. «Եւ գործ է սոցա ձեռ-
նադրել եպիսկոպոս գաւառաց, վասն որոյ
երկոտասան եպիսկոպոսաց գլուխ կարգե-
ցաւ. եւ առանց սոցա ոչ ձեռնադրի պատ-
րիարք հայոց եւ ոչ լինի ժողով, այլ գլուխ եւ
հրամանատար ժողովոյ սոքա լինին, եւ նա-
խաթոռ վարդապետութիւն եւ հրաման մեկ-
նութեան եւ թարգմանութեան սոցա միայն
շնորհեցաւ ի մեջ հայոց ի սրբոյ Սահակայ
եւ յերանցալ վարդապետէն Մեսրոբայ»:

Սա, իրոք, պերճախոս վկայություն է, որ
Սյունյաց վարդապետարանը Հայաստանի
հնագույն ուսումնագիտական կենտրոննե-
րից էր եւ բացառիկ հեղինակություն է ունե-
ցել կրթամշակութային բնագավառի մշա-
նավոր ներկայացուցիչների շրջանում:
Ստեփանոս Օրբելյանի գնահատմամբ՝
«...վարդապետարանն Սիւնեաց, որ գլուխ
էր ամենայն գիտնոց Հայոց, եւ պայծառա-
ցեալ դպրոցքն որ ի մնա. քանզի որպէս
աթենացիքն ի մեջ Հռոմոնց եւ Հունաց ճո-
խացեալ էին, եւ մայր իմաստից կոչեցեալ
ի սպանիացոց աշխարհին լատին եւ հել-
լեն դպրութեամբ, այսպէս եւ սոքա ի տանս
Թորգոմայ աշխարհիս Հայոց»: Պատմիչը,

այնուամենայնիվ, թերեւս որոշ չափազան-
ցությամբ, Սյունյաց վարդապետարանը
բարձրացրել ու հավասարեցրել է Աթենքի
նշանավոր ճեմարանին: Հայ ականավոր
գիտնական, «Ճշգրիտ գիտությունների
հայր» տիտղոսով մեծարված Անանիա Շի-
րակացին եւս բարձր է գնահատել Սյու-
նյաց (Շաղատի) վարդապետարանը՝ այն
համարելով «գլուխ ու հրամանատար» VII
դ. Հայաստանի ուսումնագիտական կենտ-
րոնների: Իսկ հայ մանկավարժության
պատմության մեծ երախտավոր Աբգար
Մովսիսյանն էլ իրավամբ գրում է, որ «7-րդ
դարը հայ դպրոցի եւ մանկավարժության
պատմության մեջ մի առանձին փայլ չէր
ունենա, եթե չլիներ Սյունյաց դպրոցները,
որոնց գլուխ էր կանգնած հոգեւոր բարձր
տիպի դպրոց-վարդապետարանը»:

Հայ միջնադարյան հոգեւոր երաժշտու-
թյան եւ հայագիր դպրության պատմության
մեջ երեւելի վաստակ է թողել Մաշտոցի
աշակերտ եւ Սյունյաց վարդապետարանի
երաժշտության ուսուցիչ Ստեփանոս Սյու-
նեցին (Ստեփանոս Սյունեցի Առաջին): Որոշ
ուսումնասիրողներ համարում են, որ նա
եղել է Սյունյաց եպիսկոպոս, սուրբ Թարգ-
մանիչների (իմա՝ Մաշտոցի) աշակերտ եւ
V դ. հեղինակ, թեւ Ստեփանոս Օրբելյա-
նի թվարկած եւ V դ. Սյունյաց եպիսկոպո-
սական աթոռն զբաղեցրած գահակալների
շարքում բացակայում է Ստեփանոս Սյու-
նեցու անունը: Հնագույն Շարակնոցներում
ամփոփված եւ Ս. Հարության տոմին Հայոց
եկեղեցիներում երգված ութշարքանի ութ-
սուն «Յարութեան» շարականները, որոնք
համարվել են հայ հոգեւոր երաժշտության
ամենավաղ ինքնուրույն նմուշներ. մասնա-
գիտական գրականության մեջ վերագրվել
են հենց Ստեփանոս Սյունեցու գրչին:

Սյունյաց վարդապետարանի երեւելի
ուսուցչապետներից է VI դ. մատենագիր, տո-
մարագետ, պատմիչ, իմաստասեր, մեկնիչ,
ճառերի հեղինակ եւ մեծավաստակ մանկա-
վարժ, քերթողահայր Պետրոս Սյունեցին:
Ստեփանոս Օրբելյանը նրան մեծաբար է
հետեւյալ խոսքերով. «...քաջ հռետորն է

անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ
եւ կատարեալ առաքինութեամբ. նախաթոռ
վարդապետաց Հայոց, քերթող եւ թարգմա-
նիչ, որ արար բազում թարգմանութիւնս, եւ
արար ճառս իմաստալից ի ծնունդն Քրիս-
տոսի եւ ընդդէմ քաղեղոնականացն եւ այլ
յողվս, եւ մեկնեաց գիրքին եւ զգծաւոր-
մաց բանս Հին եւ Նոր Կտակարանաց»:

Ուսուցչապետ Պետրոս Սյունեցին եւ առ-
հասարակ Սյունյաց վարդապետարանի
ներկայացուցիչները զգալի ավանդ ունեն
հունագիտության եւ հունաբան լեզվի ու
գիտական ոճի ձեւավորման եւ զարգաց-
ման գործում: Այս առնչությամբ Լեոն գրում
է. «Վեցերորդ դարից հայ դպրոցն սկսում է
ճյուղավորվել եւ ընդունել տարբեր գունա-
վորումներ: Ամենանշանավորը Սյունյաց
դպրոցն էր, որի առաջին խոշոր ներկա-
յացուցիչը, եթե ոչ իմնադիրը, Պետրոս
եպիսկոպոսն էր: Այս դպրոցը պտուղներ
տալիս էր համարյա երեք դար: Եվ նրա
գլխավոր հատկանիշը հունագիտությունն
էր, այնպես որ հելլենասերների գրականու-
թյունը գլխավորապես այս դպրոցի շուրջն
էր ճոխանում: Նրան պատկանող մի շարք
հոգեւոր գործիչներ կրում էին «քերթող»
գրական տիտղոսը, որ միաժամանակ գի-
տական տիտղոս էլ էր: Սյունյաց դպրոցն
ամենից առաջ աչքի էր ընկնում իր հելլե-
նաբանությամբ: Այս նշանակում էր, թե հու-
նական լեզվի ձեւերն ու ոգին մտան հայոց
գրականության մեջ»:

Մեծ հեղինակություն եւ ակնածանք վա-
յելող Սյունյաց եպիսկոպոս (547–556 թթ.)
Պետրոս Սյունեցին մասնակցել է փայլել
է 554 թ. գումարված Դվինի երկրորդ եկե-
ղեցաժողովում: Պետրոս Սյունեցու՝ աստ-
վածաբանական, գեղարվեստական ար-
ժանիքներով աչքի ընկնող առաջին երկը՝
«Գովեստ ի սուրբ Աստուածածինն եւ միշտ
կոյսն Մարիամ...» խորագրով ներբողն է:
Այն Տիրամորը նվիրված երկերի շարքում
հնագույնն է հայ եկեղեցական մատենագ-
րության մեջ: Շարադրական ուղեկցվում է
աստվածաբանական խոր, համակողմանի
մեկնաբանությամբ: Հաջորդը «Յաղագս հա-

ատոյ» վերտառությամբ մի աշխատություն
է, որն առաջին երեք տիեզերաժողովների,
ինչպես նաեւ Քաղկեդոնի եւ Եփեսոսի երկ-
րորդ եկեղեցական ժողովների համառոտ
պատմությունն է: Պետրոս Սյունեցու մյուս
աշխատությունը Սուրբ Ծննդյան մի ճառ է,
որից փոքրիկ պատառիկներ են պահպան-
վել միայն: Դրանք առկա են Ստեփանոս
Սյունեցու «Յաղագս անապականութեան
մարմնոյն» եւ Վարդան Այգեկցու «Արմատ
հաւատոյ» աշխատություններում: Պետրոս
Սյունեցու անվամբ հաջորդ երկը՝ «Հարց-
մունք յաղագս մարմնաւորութեան Տեառն»,
ներկայացնում է Աղվանից Վաչագան թա-
գավորի հարցումներն ու Պետրոսի պա-
տասխանները: Ըստ Գ. Տեր-Սկրտչյանի եւ
ուրիշ ուսումնասիրողների՝ սա վավերական
երկ չէ: «Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի
առ Սուրբն Յիզկիբուզտի յորժամ ի հանդի
էր ի Դվին» երկը վերաբերում է ս. Յիզկի-
բուզտի վկայաբանությանը: Պետրոսի թուղ-
թը գոյում է ս. Յիզկիբուզտի՝ նահատակվե-
լու պատրաստականությունը: Շարադրված
է, ամենայն հավանականությամբ, 549–
553 թթ.: Պետրոս Սյունեցին հեղինակ է նաեւ
ղավանաբանական («Ճառ ընդդէմ քաղկե-
դոնականաց»), մեկնողական («Մեկնութիւն
խրթին եւ դժուարինաց բանից Հին եւ Նոր
կտակարանաց»), ներբողական («Ներբո-
ղեան ի Բաբիկ Սիւնի») երկերի, որոնք մեզ
չեն հասել: Այս երկերից օգտվել կամ իր աշ-
խատության մեջ դրանց մասին հիշատակել
է Ստեփանոս Օրբելյանը: Այսպիսով՝ Պետ-
րոս Սյունեցին ծավալել է մատենագրական
բեղուն գործունեություն, հեղինակել է ճա-
ռեր, ներբողներ, դավանաբանական եւ մեկ-
նողական աշխատություններ: Ուսուցչապետ
Պետրոս Սյունեցու մատենագրական ժա-
ռանգությունը, ցավոք, ամբողջությամբ մեզ
չի հասել: Պահպանվել են որոշ առանձին
գործեր կամ մատենագրական այլ երկերում
քաղվածաբար մեջբերված պատառիկներ:

Շարունակելի

Արման ՄԱՆՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

«ՈՎ ԶԱՐԿՎԵՑ՝ ՊԱՎԱՃԱՆ Է»...

Մուշեղ Գալշոյանի պատմվածքներից մեկի հերոսը՝ սասունցի Դավոն, որ Անդրանիկի զինվորներից էր, գաղթից հետո իր հայրենակիցներից շատերի հետ հաստատվել էր Թալիմի շրջանում: Համառ ու ամկոտորում այս ֆիդային երկար տարիներ անց, մահվան մահճում անգամ, դեռևս հայրենի Տավորիկում էր, դեռևս շարունակում էր իր մարտը մղել թշնամու դեմ՝ հանուն իր հող ու ջրի, իր երգրի ու ասես այն աշխարհի ճանապարհից կրկին ձայնում էր՝ ինչպես անցյալում, ինչպես այն ժամանակ, երբ ուզում էր դիրք բռնել Ցիցքարի թիկունքին, երբ ահագու հրամանի պես գոչում էր. «Ով զարկվեց՝ դավաճան է...»: Դավաճան է, քանզի հայրենիքի զինվորը զարկվելու իրավունք չուներ, քանզի հայրենիքն այլևս զարկվածինը չէ:

Իսկ միթե զարկվում են միայն մարտի դաշտում, եւ «զարկվել» բառն էլ նշանակում է միայն խփվել, սպանվել, զոհվել: Ասում ենք՝ «այս մարդն ասես զարկված լինի», «զարկվածի մեկն է» եւ այլն, այսինքն՝ խելքը թոցրածի, ցնորվածի, տխմարի մեկն է: Այսօր միթե ազգովի զարկված չենք՝ բառիս ուղիղ եւ փոխաբերական բոլոր իմաստներով: Եթե լուրջ խորհենք, մեր նահատակված լուսանուն զավակներից ու այրերից զատ, ցավոք, այսօր շատերս ենք զարկված, զարկված ենք ամեն մեկս մեր տեղում, մեր դիրքում, մեր սրտում, մեր հոգում, մեր մտորումներում ու մտածումներում, մեր բարոյական ու հոգեբանական ընկալումներում, մեր արարքներում, երկրի, պետության ու պետականության հանդեպ մեր վերաբերմունքում, մեր որոշումներում, գործերում, ծրագրերում, նվիրվածությամբ, ի վերջո՝ ազգային արժանապատվությամբ ապրելու մեր տեսլականում: Զարկված ենք որպես քաղաքացի, որպես գործատու եւ աշխատող, որպես հանձնառու եւ հանձնակատար, զարկված ենք որպես մտավորական ու շինական, որպես զինվոր ու հրամանատար, որպես պետական գործիչ ու ղեկավար, զարկված ենք ու զարկված՝ մեր մեծ ու փոքր գործի մեջ, մեր իրավունքներում, մեր պարտականություններում, պատասխանատվության մեր դաշտում, քանզի անձնապաշտությամբ ու մանրախնդրությամբ, չկամությամբ ու



նախանձով, մեծախոսությամբ ու վայրահաշությամբ, օտարամոլությամբ ու այլադավանությամբ, ի վերջո՝ նաեւ մեր տգիտությամբ դարձել ենք թույլ ու խոցելի, «մենակ ու մենիկ», քայքայել մեր ամբողջականությունը, մեր հոգեւոր ու ազգային հենքը, այո՛ւմը, պատերը ու դարձել իսկապես զարկված: Կորցրել ենք մեր ոգեղենությունն ու վեհանձնությունը, մեր ուժն ու հպարտությունը, կապը՝ մեր նախնյաց ու մոլորակի վրա ապրելու մեր բուն առաքելության հետ: Ճղճիմ մտայնություն ու կենսակերպ չէ՛ արդյոք, երբ պետականաշինությունն ու բանակաշինությունը փոխել ենք դոյակաշինության ու խանութայնության հետ, ազգային անանց արժեքներին տրվելու փոխարեն ընտրել ոչ մերը, խորթը, օտարածինը, վտանգավորը, մեր ազնիվ անժամանակը, հավիտենականը, անանց սրբություններն ու հիշատակները թողել ենք հեռվում եւ ապավինել լոկ կեղծ ու սին ժամանակավորին, շինծու ու մահաբեր անցողիկին: Ուրեմն՝ զարկված ենք, եւ, բնականաբար, հայրենիքը զարկվածինը չէ. զարկվածը հայրենիք չունի:

Երբ լուրջ մասնագետի, կարող ու փորձառու, բանիմաց ու նվիրյալ կադրերի

փոխարեն երկրի կարեւոր ոլորտների, պետության ու տնտեսության տարբեր ճյուղերի ու գերատեսչությունների պատասխանատուներ ու կառավարիչներ ենք ընտրում ապաշնորհ ու ամբարտավան մեր ընկերոջը, բարեկամին, ազգականին, համերկացուն, կուսակցության անդամին, սոսկ մեր անձին իբր հավատարիմ մեկին, մտածում ենք արդյոք հայրենիքի մասին, մտածում ենք, որ մեր պետության ու պետականության ամրությունն ու հզորացումը, մեր եւ ազգի ապագան մեր ընտրությունից, մեր որոշումից է կախված: Երբ օտարահաճ ու վտանգավոր, եթե կուզեք՝ ազգասպան գաղափարներով զինված ներքին թշնամին փորձում է մեզնից վերցնել մեր ինքնության պատվարները՝ մեր լեզուն, պատմությունը, մշակույթը, հավատքը, երբ փորձում է ոչնչացնել մեր տեսակը՝ հայկյան, թորգոմյան, հայկազյան, մաշտոցյան, նարեկյան, կոմիտասյան, մենք արդյոք լռելու ենք ընդվզում ենք, ընթրստանում ու ոտքի կանգնում: Ո՛չ, ո՛չ, որովհետեւ դարձել ենք անտարբեր, անսիրտ ու անհոգի, որովհետեւ զարկված ենք, որովհետեւ ազահությունը խժեղ է մեր միտքն ու էությունը, դարձրել մեզ սնամեջ: Արարող, ստեղծող, «քարից հաց քամող», լեռնածին ու ժայռակուռ, ոգեղեն ու ոգեշունչ մարդուց վերածվել ենք սպառնողի, քանզի մեր հոգսը դարձել է սոսկ հեշտ ձեռք բերվող, հեշտ «թխվող» «հացի» խնդիրը: Արդյոք կամ մեկ այլ ազգ, որն ունի «որտեղ հաց» այնտեղ կաց» նսենացուցիչ ասացվածքը, որին մշտապես սրբորեն հետևում ենք՝ երկիրն ու հայրենիքն անտեր ու անպաշտպան թողնելով: Պանդուխտի ցուլայն ասես անբաժան է մեզնից, եւ այդ ցուլայն առած հեռանում ենք երկրից: Մեր հայրենասիրությունը հեռվից ավելի լավ է ստացվում: Պարզվում է՝ մենք աքսորակ-

տը սիրող ժողովուրդ ենք, եւ թվում է, թե մեր սերն էլ, հայրենիքն էլ, հիշատակներն էլ, ծնողներն էլ, զավակներն էլ աքսորակտ են, եթե կուզեք՝ «ոչ միայն հացիվ»-ը, այլեւ «հանապազօրյա հացն» էլ է աքսորակտ, քանզի հեռանում ու մարում ենք մեր թոմարի հազարամյակների կրակը: Ասում ենք՝ արարող, կառուցող ազգ ենք, սակայն եթե արարում ու կառուցում ենք, դա էլ է աքսորակտ, որովհետեւ ավելի շատ կառուցում ենք ուրիշի երկրում՝ ուրիշի համար. տեսնես Բաքվում այսօր հիշում են Տեր-Ղուկասովին, Լալայանցին, Մանթաշովին...

Այն, ինչ կառուցել ու կառուցում ենք ուրիշի հողում, երանի մեր հողում կառուցե՞նք, որքան օրինապաշտ ենք ուրիշի երկրում, երանի մերում լինե՞նք...

Երանի այսքան զարկված չլինե՞նք... Մենք փոքրաթիվ ժողովուրդ ենք: Սա մի կողմից կարելի է որպես առավելություն դիտել, մյուս կողմից՝ ողբերգություն: Օտարի միջին մեծության մի քաղաքի չափ բնակչություն ունեցող երկրի ժողովուրդին գաղափարապես մեկտեղելն ու արժանապատիվ, բարեկեցիկ կյանք ապահովելը, բարոյահոգեբանական, հոգեւոր-մշակութային դաշտում պահելը շատ ավելի հեշտ է, ինչպես նաեւ հեշտ է նրան ազգային արժատներին ու արժեքներին հավատարիմ ու նվիրված պահելը: Սակայն հեշտ է նաեւ հակառակը, եւ այդ չարաբաստիկ, ողբերգական հակառակի արդյունքը տեսանք, տեսանք, որովհետեւ զարկված էինք ու վերստին զարկվեցինք, որովհետեւ հետեւեցինք ոչ թե պատմական մեր դասին, մեր իմաստուն ու լուսանուն մեծերի՝ մեզ ժառանգած փորձառությանը, ոչ թե ԴԱՎՈՅԻՆ, որը մահվան մահճում անգամ հայրենիքի զինվոր էր ու իր կիսատ մարմն էր շարունակում, այլ թշնամու սեղանից իր «հացի» խնդիրը լուծող «մեծապատիվ» զարկվածներին:

Երանի մեր մեջ նորից արթնանա՞ր ԴԱՎՈՅ՝ այն մահապարտ ՀԱՅՈՐԴԻՆ, որը հանուն հայրենիքի, հանուն պետականության մոռացած անձն ու անձնակամը՝ նորից ու նորովի ձայներ. «Ով զարկվեց՝ դավաճան է»...

Ա. ՍՏԱՄԲԼՅԱՆ

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅԸ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ

Սկիզբը՝ էջ 5, 6

4. «Քավ լիցի, որ մի որեւէ իսլամ մտածի, թե խալիֆան հանցավոր կարող է լինել, բայց պետք է հաղթել օգոստոսափայլ, չար օրվա չար բեկումներին» (նույն տեղում, էջ 336):

5. «Նախընտրելի է բարի կիրք ունենալ» (նույն տեղում, էջ 308):

Առավել լայն կիրառություն ունեն փոխաբերությունները: Փոխաբերական գործածությունների շնորհիվ բառերը ձեռք են բերում արտահայտչականություն՝ դառնալով նկարագրվող երեւոյթների, իրողությունների արտացոլման լեզվական ներգործուն միավորներ: Դիտարկենք օրինակներ.

1. «Դեռ չի սառել Տոուզյանների արյունը» (նույն տեղում, էջ 305):

2. «Մենք շատ ենք եփված, տեր իմ, պետական ծառայության դժվարին գործերում» (նույն տեղում, էջ 283):

3. «Եթե սրանից ավելի խոշոր ոճիրներ կույ եւ գնացել ժամանակի անդունդում, ինչո՞ւ...» (նույն տեղում, էջ 282):

4. «Ինձ խեղդում է այդ ապտակը» (նույն տեղում, էջ 294):

5. «Ամոթը այրում է իմ ողջ էությունը, Սիմխա...» (նույն տեղում, էջ 312):

6. «Ժամանակը կույ է տվել սրանից ավելի խոշոր ոճիրներ» (նույն տեղում, էջ 281):

Բառերի փոխաբերական գործածություններով գրողը միմյանց է մոտեցնում ամենատարբեր երեւոյթները, հատկանիշներն ու գործողությունները, ոճական հնարանքի արտահայտչականությունն օգտագործում իր մտածողության յուրահատկություններն ավելի ցայտուն դրսևորելու համար, ինչպես օրինակ՝

1. «Մարդկային կոկորդից ավելի անհատակ ծակ չկա, մեծ վեզիր: Այդ ծակում կարելի է պարփակել մի ողջ աշխարհ սուտ: Եվ այդ բոլորից հետո, երբ կհարստանաք, մեծ վեզիր, կառուցել կտաք մի մզկիթ եւ կապահովեք մի լուսավոր անկյուն իսլամական դրախտում: Սխալ է, որ մարդիկ սիրում են ճշմարտությունը եւ ճշմարիտ մարդկանց: Մարդիկ սիրում են սուտը, սուտը ատամներ չունի, սուտը քաղցր է, դուրեկան սուտի մեջ ցավ չկա: Ես ճանաչում եմ մարդկանց...: Գնա՛րտությունը անողորք է...» (նույն տեղում, էջ 295):

2. «Լույսի մեջ ավելի շիտակ կգործեմ, քան խավարի մեջ գործել եմ: Թող վստահ լինի իմ փաղիշահը եւ խալիֆան...» (նույն տեղում, էջ 303):

3. «Սուտ է ամեն ինչ: Միայն ապտակներ գոյություն ունեն աշխարհում եւ բոլոր ապտակների մեջ՝ միայն այն ապտակը, որ ապրում է իմ երեսին եւ վառվում, վառվում իբրեւ ամոթ, վառվում իբրեւ քրիստոնեական դատակնիք...» (նույն տեղում, էջ 312):

4. «Ես սպասում եմ, բայց ջղերս, ջղերս կորցնում եմ ամեն կերպ: Դատապարտում եմ ես ինքս ինձ: Մովսեսի զավակներից եւ ոչ մեկը այսպիսի թուլություն երեւան չի բերել: Ձիղը իմ առաքինությունն է: Ես կորցրի իմ առաքինությունը, Սիմխա: ...Ապտակեցին ինձ, խեղդվում եմ, ամոթը խեղդում է...» (նույն տեղում, էջ 313):

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Ստեփան Զորյանի «Տխուր մարդիկ» պատմվածաշարը

Սկիզբը՝ էջ 4, 6

Նրա հերոսներից մեկը նկարագրված է հետեւյալ ձևով՝ «կապույտ քիթ, գարու հասկերի նման բարակ շեկ բեղեր եւ թուխ, մսի մեջ կորած բուք աչքեր»: Այս սեղմ նկարագրությունը հերոսի արտաքինը միանգամայն տեսանելի է դարձնում: Ինչպես այս պատկերների, նույնպես եւ տիպերի կերտման մեջ երեւում է Զորյանի հաջողության պատճառներից մեկը՝ նուրբ դիտողականությունը: Կերպարակերտման իր երկու եղանակները՝ հերոսի հոգեբանության մեջ խորանալը եւ տպավորությունների հաղորդման ձեւը, հենվում են այդ նուրբ ու զարգացած գեղագիտական հայացքների խորությամբ վրա:

Զորյանը հրապարակ եկավ այն ժամանակ, երբ հայ գրականության մեջ իշխում էր լավկան ռոմանտիզմը, երբ վերամբարձ ոճը եւ հուզականությունը համարվում էին գեղարվեստականության ապացույցներ:

Զորյանի ռեալիզմը նրա գրական գործունեության առաջին շրջանում վերին աստիճանի ժուժկալ է. հաճախ ավելի քան պետք է: Այդ ժուժկալությունը երբեմն վնասել է Զորյանի ոճին, զրկել է այդ ոճը անհրաժեշտ պայծառությունից, սակայն իր լավագույն գործերի մեջ նա հասնում է ոճի յուրահատուկ պայծառության. պայծառություն, որի մեջ կա յուրահատուկ մեղմություն. նույնիսկ ցնցող տեսարանները մեղմանում են հեղինակի վրձնի տակ: Վառ գույներ Զորյանը չի սիրում, նա կիսագույներ է հեղինակել: Այդ կիսագույներն էլ ողողված են ոչ թե արեւի, այլ լուսնի լույսով: Զորյանի ոճին հատուկ է նաեւ քնարական ջերմությունը, մանավանդ իր լավագույն գործերի մեջ նա հասնում է

խոսքի եւ զգացմունքի բանաստեղծության կատարելության: Նա գիտի տեղին գործածել զգացմունքի նոտաները եւ դրանք շաղկապելով իր գրելակերպի պարզության հետ՝ հասնել ցանկալի արդյունքի: Դրան նպաստում է նաեւ այն հանգամանքը, որ նա ունի մշակված ու կիրք լեզու եւ լավ գիտի իր նկարագրած կյանքը, որոնք եւս նպաստել են, որ նվաճի իր մնայուն եւ կարեւոր տեղը մեր գրականության մեջ:

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱՂ ԳՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Ասողիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 2.02.2021 թ.

Տպաքանակը՝ 1175